Azg Ազգ

Azg armenian daily

26 ՄԱՅԻՍ 1994. ՀԻՆԳՇԱԲԹԻ # 98 (601)

SABCO

SABCO OVERSEAS TRADING LTD.

LIMASSOL CENTRE, BLOCK B, SUITE 307, P. O. BOX 6543
TEL +357-5-370962
FAX. +357-5-370945

OUR BANKERS: B. E. M. O. BANK, LIMASSOL, CYPRUS; FEDERAL BANK OF THE MIDDLE EAST, LIMASSOL, CYPRUS; BANK OF CYPRUS, LIMASSOL, CYPRUS; HELLENIC BANK, LIMASSOL, CYPRUS

Հայաստանի եւ ԱՊՀ երկրների համար
Կիպրոսի եւ Ռոտերդամի պահեստներից
ՇԽՎԽՈՏ, ՄԹԵՐՔ, ԽՄԻՉՔ, ԿՎՃՈՒՅՔ
ուղիղ հասցեատիրոջը՝ նավով եւ ինքնաթիռով

ՈԱԿ-ԲԱՆԱՁԵՎ

Տուկայական համակարգի արագացված հասատում

Հայաստանի Ռամկավար ազատական Կուսակցության 3-րդ (արտահերթ) Հանրապետական պատգամավորական ժողովի բանաձեւը հանրապետության տնտեսական կացության եւ կուսակցության ընթացիկ տնտեսական խաղաքաղաքականության մասին

Հայաստանի ներկա տնտեսական կացության եւ բնակչության գերակշռող մասի զանգվածային ու խորացող աղքատացման սկզբնաղբյուրները՝ հանրահայտ պայմանների շրջանակներում, ՀՈԱԿ-ը տեսնում է իշխանությունների վարած խաղաքաղաքականության, պրոֆեսիոնալիզմի եւ պատասխանատվության պակասի ու դրանցից ածանցված հասարակական բարոյական մթնոլորտի մեջ:

ՀՀ իշխանությունների մոտ տուկայական բարեփոխումների իրատեսական ծրագրի բացակայությունը եւ դրա հետեւանքով տուկայական համակարգի հասատմանը ուղղված մեկուսի ու հակասական գործողությունները, հանգեցրել են աննախադեպ տնտեսական անկման եւ բնակչության ծայրագույն անապահով վիճակի: Չեն իրագործվել կառավարության ներկայացրած եւ ՀՀ Գխ-ում հաստատված «սոցիալ-տնտեսական զարգացման» արդեն երրորդ ծրագրերի հիմնական նպատակները: Բնակչության եւ տնտեսության համար հակատոտ ադեռալի եր 1993 թ., երբ չշաղկաղված, անսկզբունք գործողությունների արդյունքում՝ վարկային էմիսիան եւ դրամի ներդումը, ազգային արտադրության իրական ծավալը կրճատվեց կիսով չափ, իսկ բնակչության իրական եկամուտները՝ ավելի քան 10 անգամ: Նշված հարաբերակցությունը կառավարության բացարձակ անարդյունավետության ամենակնառու ցուցանիշն է:

Իշխանությունները հրաժարակավ իրենց ազատել են հոյատակների կենսանվազագույնը ապահովելու յուրաքանչյուր կառավարության անբաժան պարտականությունից:

Նախկին արժեքները եւ գաղափարախոսությունը մերժած հասարակությունը չստեղծելով նորերը, իր անդամների չքավոր կացությանը ավելացրեց նաեւ անորոշությունը, անվստահությունը եւ վախը ապագայի նկատմամբ: Այդ պատճառով հասարակության կերուսում ծավալվում եւ ամրանում են համայնավարական, հավասարարական տրամադրությունները: Վարկաբեկվում են իրական տնտեսական եւ քաղաքական ազատականության գաղափարները: Խանդավառությամբ կործանված տնտեսական համակարգի փոխարեն ձեւավորվել է յուրահատուկ հակահամակարգ՝ գների եւ աշխատավարձի աբսուրդի հասնող հարաբերակցությամբ եւ ողբերգական «կենսամակարդակով»:

ՀՈԱԿ-ը տնտեսական անկման կանխումը եւ Հայաստանի Հանրապետության ապագա բարգավաճումը անմիջականորեն կապում է տուկայական համակարգի ճարագացված հասատման հետ՝ նպատակին համարժեք կարեւորելով միջոցները:

Տուկայական բարեփոխումների առանցքային խնդիրն է եղել եւ մնում է մասնավորեցումը: Դրա նախապայմանների ստեղծումը՝ իրավական հիմքերի ապահովում, կառավարման ապակենտրոնացում, պետական ձեռնարկություններին սեփականության սուբյեկտի կարգավիճակի տրամադրում եւ մրցակցային տուկայական միջավայրի ձեւավորման օժանդակում, ՀՀ իշխանությունների առաջնահերթ խնդիրը պետք է լինի: ՀՈԱԿ-ը առաջնորդվում է այն ճշմարտությամբ, որ ազատականությունը տուկայի ներքին հատկանիշն է, հետեւաբար, անցման շրջանում գործադիր իշխանությունը պարտավոր է իրականացնել նաեւ ծավալուն տնտեսական գործունեություն ինչպես բուն արտադրության կազմակերպման, այնպես էլ բնակչության կենսապահովման բնագավառում:

Մենք պատրաստակամություն ենք հայտնում համագործակցելու ՀՀ իշխանությունների եւ քաղաքական եւ հասարակական մյուս կառույցների հետ տուկայական բարեփոխումների իրականացման գործում եւ մասնակցում ազգային բոլոր ռեսուրսների հավաքագրման եւ արդյունավետ օգտագործման անհրաժեշտությունը: ՀՈԱԿ-ը իր անմիջական օժանդակությունն է առաջարկում արտերկրում ազգային հայկական բաժնետիրական բանկի հիմնման գործում, որի նպատակը պետք է դառնա սփյուռքի տրամադրած միջոցների հավաքագրումը եւ նպատակային օգտագործումը երկարաժամկետ ներդրումների ձեւով: Հայաստանի տնտեսության ազատման եւ վերելքին կծառայի նաեւ միջազգային տուկանների ուսումնասիրությունը եւ կանխատեսում իրականացնող, պետական ֆինանսավարկային գործող կորպորացիայի հիմնադրումը, որին եւս պատրաստ է սատարել ՀՈԱԿ-ը:

ՀՈԱԿ-ը գտնում է, որ բոլոր ուժերի եւ միջոցների հավաքագրումն է, որ ճշմարիտ՝ ազատական սկզբունքների գործադրմամբ բարձրացնելու է ՀՀ տնտեսությունը եւ ապահովելու մարդկանց բարեկեցիկ կյանքը:

ՀԱՄԱՌՈՏ

Ֆրանսիայի բանակը ամենախոշորը Եվրոպայում

ՓԱՐԻԶ, 25 ՄԱՅԻՍ, ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ԱՐՄԵՆՊՐԵՍ: Մինչեւ 2000 թ. Ֆրանսիան կունենա ամենախոշոր բանակը Եվրոպական մայրցամաքում եւ իր ծավալներով ԱՄՆ-ից հետո երկրորդ խոշոր պատշգամական բյուջեն Արեւմուտքում: Այդ մասին հայտարարեց Ֆրանսիայի պատշգամության նախարար Ֆրանսուա Լեոտարը, Ազգային ժողովում ներկայացնելով Ֆրանսիայի 1995-2000 թթ. ռազմական ծրագրերի մասին օրինագիծը:

Առանց քվեներ հավելու

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 25 ՄԱՅԻՍ, ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ԱՐՄԵՆՊՐԵՍ: ԱՄՆ Կոնգրեսի ներկայացուցիչների պալատի հատկացումների կոմիտեն առանց քվեներ հավելու հավանություն տվեց արտասահմանյան օգնության մասին օրինագծին, որով նախատեսվում է 1995 թ. ֆինանսական տարում 900 մլն դոլար տրամադրել նախկին խորհրդային հանրապետություններին: Քլինթոնի վարչակազմը հենց այդքան էր պահանջել նորանկախ պետություններում իրականացվող բարեկարգումներին օժանդակելու համար:

Երիքով մտնելու միօրյա արգելք

ՅԵՐՈՒՍԱԼԵՄ, 25 ՄԱՅԻՍ, WSJ: Իսրայելական իշխանությունները միօրյա արգելք դրեցին Երիքով մտնող բոլոր դրսեցիների վրա, քանի որ տեղի պաղեստինյան ոստիկանությունը, «լավ չընթանալով իրավասության սահմանները», նախորդ օրը ձերբակալել էր 4 հրեաների, նրանցից առգրավելով զենքեր: 24 ժամյա արգելքի նպատակն է, ըստ իսրայելական աղբյուրների, ապահովել պաղեստինյան ոստիկանությանը «լավ ընթանալու իր նոր պարտականությունները»...

ՂԱՐԱԲԱՂ

Հակառակորդի երկու վաշտ հարձակվեցին Կարախանբեյլիի վրա

ՎԱՀՐԱՄ ԱՂԱՅԱՆՅԱՆ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ, 25 ՄԱՅԻՍ: Մի քանի օր տեւած անդորրից հետո իրադրությունը ղարաբաղյան ռազմաճակատի հարավարեւելյան հատվածում կրկին սրվել է: Ըստ ԼՂՀ պաշտպանության բանակի շտաբի, մայիսի յոթ 25-ի գիշեր ադրբեջանական երկու հետեւակային վաշտեր մոտ 250 զինվոր, մեկ հետեւակի մարտական մեքենայի աջակցությամբ անցել են հարձակման Ֆիզուլու շրջանի Կարախանբեյլի գյուղի ղարաբաղյան պաշտպանական դիրքերի ուղղությամբ: Գրոհն ուղեկցվում էր հայկական բնագծերի ուժգին հրետակոծմամբ: Ծավալվել են դաժան մարտեր, որոնց ընթացքում ղարաբաղյան ուժերին հաջողվել է լիովին կասեցնել թշնամու գրոհը՝ պատճառելով կենդանի ուժի կորուստներ: Երկժամյա մարտերի ընթացքում ոչնչացվել է թշնամու 13 զինվոր: Հայկական կողմից զոհեր եւ վիրավորներ չկան: Ռազմաճակատի մյուս հատվածներում հակառակորդը բավարարվել է միայն ղարաբաղյան դիրքերի հրետակոծումներով: Այսպես, հրետակոծվել են Աղդամի շրջանի Գյուլիջա, Շուշաբաղ, Մարտակերտի շրջանի Սեյսուլան, Հասանկայա եւ Թալիշ գյուղերի հայկական դիրքերը: Տուժածներ չկան:

Մեկնաբանելով ադրբեջանական բանակի կողմից հրադադարի խախտման փաստերը, ԼՂՀ պաշտպանության բանակի շտաբի պատասխանատու աշխատակից Մերժ Առուբանյանը հայտնել է, թե այս ամենը մեկ անգամ եւս աղացուցում է, որ կարճատեւ հրադադարներն Ադրբեջանն օգտագործում է բանակը համալրելու եւ նոր գրոհներ նախապատրաստելու համար: ԼՂՀ ռազմական հետախուզության տվյալներով, վերջին օրերին Բաքվից Աղդամի շրջան են տեղափոխվել մոտ 400 նորակոչիկներ: Ըստ դրա, Առուբանյանի, Ադրբեջանը դժվարությամբ է համալրում իր բանակի շարքերը, եւ պատահական չէ, որ նորակոչիկների 80 տոկոսը 17-18 տարեկան պատանիներ են:

ԿԱՐԳԱԿՈՐՈՒՄ

Բահուն ձգձգում է համաձայնագիրը

ԲԱՔՈՒ, 25 ՄԱՅԻՍ, ՆՈՅԵՄՆ ՏԱՊԱՆ: Ինչպես հաղորդում է Ադրբեջանի պատշգամության նախարարության մամլո ծառայությունը, երկրի պատշգամության նախարարը համաձայնագրին չմիացավ փաստաթղթերի որոշ կետերի հետ համաձայն չլինելու պատճառով: Բացի այդ, այն չստորագրվեց գրավված ադրբեջանական տարածքներից իր զորքերը դուրս բերելուց հայկական կողմի հրաժարվելու պատճառով:

Ռուսաստանում Ադրբեջանի դեսպան Ռամիզ Ռիզաեւը հաղորդել է, որ առաջին փուլում պայմանավորվածությամբ նախատեսվում է դադարեցնել կրակը եւ դիտորդներ մտցնել տարածաշրջան, երկրորդ փուլում հայկական զորքերը հետ քաշել գրավված ադրբեջանական տարածքներից (բացառությամբ Շուշի քաղաքից եւ Լաչինի միջանցքի), այնուհետեւ կողմերը քննության են առնելու Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցը, Շուշի քաղաքի հետագա ճակատագիրը:

Տես նաեւ էջ 8

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

Հայաստանն իր քաղաքացիներին կվճարի ԽՍՀՄ արտտսբանկի պարտքերը

ԵՐԵՎԱՆ, 25 ՄԱՅԻՍ, ՄՆԱՐԿ: Այս տարի Հայաստանի կառավարությունը կսկսի հանրապետության քաղաքացիներին վճարել ԽՍՀՄ արտտսբանկի արժութային պարտքերը: Այսօր այդ դրությունը որոշում ընդունեց հանրապետության խորհրդարանը: Հայաստանի ֆինանսների նախարարի առաջին տեղակալ Վահրամ Ավանեսյանի խոսքերով, նախկին ԽՍՀՄ արտտսբանկի հանրապետական բաժանմունքի արժութային հաշիվների համաձայն, պետք է վճարվի մոտ մեկ միլիոն 700 հազար ամերիկյան դոլար: Այդ գումարները ենթադրվում է ստանալ Հայաստանի պետբյուջեից, ինչպես նաեւ Ռուսաստանից, եթե ձեռք բերվի համապատասխան պայմանավորվածություն: Իրավաբանական անձանց եւ ձեռնարկությունների արժութային ավանդների հարցն առայժմ չի քննարկվել:

Փոխնախարարի պնդման համաձայն, արժութային ավանդների վճարումը չի հանգեցնի հանրապետությունում արժեզրկման էական աճին:

ԲՐՅՈՒՍԵԼ

Գրաչովը մեկնում է Ռուսաստանի պաշտպանական դոկտրինը

ԱՄՆ պաշտպանության նախարար Ուիլյամ Փերին երեքշաբթի օր Բրյուսելում հայտարարեց, թե Ռուսաստանին վնասի իրավունք չի տվի ՆԱՏՕ-ի «Գործակցություն հանուն խաղաղության» ծրագիրը: Նրա խոսքերով, ՆԱՏՕ-ի անդամ բոլոր երկրները համակարծիք են, որ ծրագրին միանալու դեպքում Ռուսաստանը չպետք է ունենա հատուկ կարգավիճակ կամ արտոնություն: Լրագրողների հետ զրուցելիս ԱՄՆ պաշտպանության նախարարը ոչ պաշտոնական ձեւով նշեց, թե Ռուսաստանի համար այլընտրանք չի տեսնում, բացի համահավասար իրավունքներով ծրագրին մասնակցելուց: Մինչդեռ, առանց որեւէ նախապայմանի «Գործակցություն հանուն խաղաղության» ծրագրին միանալու պատրաստակամություն հայտնելով հանդերձ, Ռուսաստանն առաջարկում էր ՆԱՏՕ-ի հետ ավելի ընդարձակ եւ առանձին հարաբերություններ ունենալ:

«Ռուսաստանը որեւէ դայման առաջ չի քաշում «Գործակցություն հանուն խաղաղության» ծրագրի նկատմամբ, ՆԱՏՕ-ի կենտրոնակայանում Ռուսաստանի ռազմական դոկտրինը ներկայացնելուց անմիջապես հետո լրագրողների հետ կայացած հանդիպման ժամանակ երեկ իր հերթին հայտարարեց Ռուսաստանի պաշտպանության նախարար Պավել Գրաչովը: Դա անդաստաճ վիլիներ: Սակայն այս համադրությունը ընդհանուր է: Դրանում չեն բացահայտված գործակցության ձեւերը, եղանակները ու սկզբունքները, կոնկրետ խնդիրները»:

Նա հարկադրեց, որ իր Բրյուսել մեկնելուց առաջ Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինը «վերահսկվածից հանձնարարեց ՆԱՏՕ-ի պաշտպանության նախարարներին հայտարարել, որ Ռուսաստանը կմիանա «Գործակցություն հանուն խաղաղության» ծրագրին:

«Ռուսաստանի ռազմական դոկտրինի քաղաքական հիմքը ներառում

է երկու փոխկապակցված խնդիր պատերազմի կանխում եւ պատրաստակամություն հակահարված տալ ագրեսորին», հայտարարել է Պավել Գրաչովը ՆԱՏՕ-ի շտաբ-բնակարանում, իր ելույթի ժամանակ: «Ռուսաստանն, ըստ նրա, մերժում է ցանկացած պատերազմ կամ ուժի գործադրում հանուն քաղաքական, տնտեսական կամ այլ նպատակների ձեռքբերման: Ռուսաստանը կոչ է անում բոլոր երկրներին պարտավորություն վերցնել առաջինը ուժի չդիմելու վերաբերյալ:

ԻՏԱՌ-ՏԱՍՍ, Մնարկ. Փաստ

digitised by A.R.A.R.@

տեղական

ԱՅԾ

Ասոս Սաֆարյան. «Ղարաբաղը եւ Ղրիմը նույնը չեն»

Ղրիմի ժողովուրդների բոնագաղթի 50 ամյակին էր նվիրված այնտեղ կազմակերպված հավաքն ու հանդիսավոր նիստը, որին մասնակցում էր նաեւ ՀՀ ղեկավարությունը՝ արդյունաբերության նախարար Ասոս Սաֆարյանի գլխավորությամբ: Պատվիրակության կազմում էր նաեւ ՀՀ արտաքին գործերի փոխնախարար Էդուարդ Մելքոնյանը: Է. Մելքոնյանին եւ ՀՀ խորհրդարանի դեսպան Ա. Նավասարդյանին ընդունել է Ղրիմի ԳԽ նախագահ Ցեկովը: Հանդիպում է տեղի ունեցել նաեւ Ղրիմի հայ համայնքի ներկայացուցիչների հետ: Հանդիպումների ընթացքում Ղրիմի իշխանություններ հավաստիացրել են, որ ձեռնարկվում են բոլոր հայերն ու միջոցառումները, որոնցով թույլ չտրվեն ազգամիջյան ընդհարումներ: Պատասխանելով բոլոր կիցներից մեկի հարցին՝ Ա. Սաֆարյանը իր կարծիքը հայտնեց, որ «Լեռնային Ղարաբաղի եւ Ղրիմի իրադրությունը այնքան էլ նույնանման չէ»: ԼՏ

Կենտրոնական բանկի վարկային ռեսուրսների աճուրդ

ԵՐԵՎԱՆ, 25 ՄԱՅԻՍ, ՓԱՍՏ: Կենտրոնական բանկից Փաստին տեղեկացրին, որ ս. թ. մայիսի 31-ին ՀՀ Կենտրոնական բանկում (Նալբանդյան փ. 6) տեղի կունենա Կենտրոնական բանկի վարկային ռեսուրսների աճուրդ: Աճուրդին մասնակցելու իրավունք ունեն ՀՀ տարածքում գրանցված իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող բանկերը: Աճուրդի է հանվում 200 մլն դրամ վարկային ռեսուրս, 360 տոկոս մեկնարկային տոկոսադրույքով մինչեւ 1994 թ. դեկտեմբերի 1-ի մարման ժամկետով: Հայտերն ընդունվում են մինչեւ 1994 թ. մայիսի 30-ի ժ. 12.00: Հայտի հետ ոչեմ է ներկայացվի բանկի հաշվեկշիռը, հայտի ներկայացման նախորդ օրվա դրությամբ, բանկի ֆինանսական եւ տնտեսագիտական նորմատիվները բնութագրող անձնական թերթիկը, որը նախօրոք տրվելու է ՀՀ ԿԲ դրամավարկային վարչության կողմից: Լրացուցիչ տեղեկությունների համար ԿԲ-ն առաջարկում է զանգահարել 56-36-42 կամ 58-73-06 հեռախոսահամարներով:

ՍՈՉԻԱԼԱԿԱՆ

Տրանսպորտը շքեղությո՞ւն է, թե փոխադրամիջոց

ԱՐՄԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Այսօր հանրապետության հիմնական խնդիրներից մեկը տրանսպորտն է: Վառելիքի գներն այնքան բարձր են, որ ավտոմեքենան դարձել է ոչ թե փոխադրամիջոց, այլ շքեղություն, եւ հանրապետությունում տեղից տեղ գնալն այսօր նյութական մեծ դժվարությունների հետ է կապված: Բացի այդ, միջքաղաքային ավտոբուսների 36 երթուղի անցած տարիների ընթացքում փակվել է (հիմնականում Ադրբեջան, Հյուսիսային Կովկաս եւ այլն), իսկ մնացածները կրճատվել: Խնդիրը միայն նյութականը չէ: Օրինակ, Մեղրի գնալ հնարավոր է միայն երեքշաբթի օրերին, Քաջարան՝ նաեւ ուրբաթ օրերին: Ուղեվարձը ոչ մի կերպ չի համադասվում հանրապետությունում գոյություն ունեցող աշխատավարձերին: Այսպես, Գյումրիի եւ Վանաձորի (այս ուղղություններով օրական աշխատում է 6 ավտոբուս) տոմսն արժե 420 դրամ եւ այլն: Ինչպե՞ս են գոյանում այս գները: Ինչպես տեղեկացանք տրանսպորտի նախարարության ուղեւորների փոխադրման վարչության ղեկ Ժիրայր Սարգսյանից, միջքաղաքային երթուղիներում չկա շահույթի վերին սահման, եւ քանի որ վառելիքը հայթայթում են տրանսպորտային ձեռնարկությունները, նրանք էլ որոշում են ուղեվարձը եւ ներկայացնում նախարարությունը հաստատման:

«Այսօր Հայաստանում չկա մի շրջկենտրոն, որը Երեւանի հետ ավտոբուսային հաղորդակցություն չունենա, ասում է պրն. Սարգսյանը: Ինչ վերաբերում է ուղեվարձերին, առայժմ հաստատվել են դեռեւս ապրիլի 29-ին, եւ ամենայն հավանականությամբ առաջիկայում կփոխվեն: Հանախ ուղեւորների մեջ ժխտություն է առաջանում, երբ տեսնում են, որ նույն երթուղու ուղեվարձը տարբեր է: Պատճառն այն է, որ որոշ ավտոբուսներ աշխատում են հեղուկ վառելիքով, մյուսները գազով: Վերջիններս ավելի էժան են: Բոլոր այն ուղղություններով, որտեղ ուղեւորահոսք կա, մենք ի վիճակի ենք նոր ուղերթներ բացել: Սակայն հանրապետությունում ուղեւորահոսքը խիստ նվազել է, եւ ներկայումս մեզ մոտ ավտոբուսների ավելցուկ կա»: Իհարկե, դրա առաջին եւ հիմնական պատճառը բանկացումներն են: Մարդիկ ստիպված են տեղից տեղ գնալ միայն խիստ անհրաժեշտության դեպքում: Բանն այն է, որ նախկինում վառելիքի արժեքը կազմում էր բոլոր ծախսերի 25 տոկոսը, ներկայումս 80-85 տոկոսը: Բնականաբար դա տեղի է ունենում մյուս ծախսերի պահեստամասերի, աշխատավարձի եւ այլնի հաշվին: Իսկ այն պատասխանը 2 տոկոսը, որը տրվում է պետությանը ճանապարհների նորոգման համար, բավականին խղճուկ գումար է:

Ի դեպ, հետաքրքիր է, որ տոմսերի վաճառից ստացված գումարի 7 տոկոսը վերցնում է ավտոկայանը՝ աշխատավարձերի եւ նորոգման աշխատանքների համար: Մինչդեռ հանրապետությունում այսօր դժվար է գտնել մի ավտոկայան, որն իր վրա կրի վերջին մի քանի տարիներին կատարված նորոգման հետքերը: Ինչ վերաբերում է Երեւանի նոր ավտոկայանին (Քանաքեռի մոտ), առայժմ այն կառուցելու ժամանակ հիմնական ուղերթները դեռեւ հյուսիս էին, իսկ հիմա իրավիճակը փոխվել է, եւ նոր ավտոկայանը կորցրել է իր նշանակությունը: Ինչպես:

Երբ միջքաղաքային ուղերթներում իրավիճակը բարդ է, եւ մարդիկ կարող են օրերով սպասել, թե երբ վերջապես կլցվի այս կամ այն շրջան մեկնող ավտոբուսը, առայժմ մերձքաղաքային ուղերթներից բացառությամբ չեն կրճատվել: Դրա փոխարեն նվազել է երթերի թիվը: Երբ նախկինում Երեւան-Արովյան գծում աշխատում էր 15-16 ավտոբուս, առայժմ այսօր աշխատում են 4-5-ը: Մերձքաղաքայինում շահութաբերի վերին սահմանը 15 տոկոս է: Այլ կերպ ասած, ավտոձեռնարկությունը որոշում է փոխադրումների իսկական արժեքը, ավելացնում 15 տոկոս եւ նշանակում գինը: Գործնականում ձեռնարկությունը ամեն օր կարող է փոխել ուղեվարձի չափը:

Նույնը փաստորեն տեղի է ունենում Երեւանի ներսում՝ այն տարբերությամբ, որ ներքաղաքային ավտոբուսների շահույթի վերին սահմանը 5 տոկոս է, պետական երթուղային տաքսիներինը՝ 15 տոկոս: Վերջիններս չեն կարող մրցել մասնավոր «երթուղային տաքսիների» հետ, որովհետեւ նախ պետականները կանխիկ փող չունեն (նրանք պետք է ստացված գումարը մուծեն բանկ), եւ երկրորդ բազմաթիվ հարկեր են վճարում, որոնցից խուսափում են մասնավորները: Բանի որ լիցենզավորված չեն: Մինչդեռ տրանսպորտի նախարարությանը թույլ չեն տալիս ինչ-որ կերպ վերահսկել մասնավոր երթուղային տաքսիների աշխատանքը, լիցենզիաներ տալ նրանց եւ այլն:

Ինչ վերաբերում է բեռնափոխադրումներին, առայժմ այսօր պետական դաշտը գոյություն ունի միայն կենսական նշանակության բեռնափոխադրումների խնդրում (հաց, մազութ եւ այլն): Այսօր բեռնափոխադրումների վարչությունն աշխատում է իր հնարավորությունների 8-10 տոկոսով: Պատճառը դաշտերների բացակայությունն է: Հանրապետությունում բեռների փոխադրման 60 տոկոսն իրականացվում է երկաթուղու միջոցով: Ներկայումս նախարարությունը փորձում է դաշտանագրեր կնքել բեռնատարներ Ռուսաստանում եւ ԱՊՀ այլ երկրներում աշխատեցնելու համար: Մի խոսքով, իրավիճակը փայլուն չէ, թեեւ տրանսպորտի նախարարությունը փորձում է իրավիճակին դուրս գալու ուղիներ գտնել: Ստեղծված իրավիճակի պատճառը ոչ միայն այն է, որ վառելիք չկա, դահեստամասեր չկան եւ այլն, այլեւ այն, որ տեղափոխելու բեռներ չկան: Իսկ դա նշանակում է, որ տնտեսության զարգացմանը զուգահեռ տրանսպորտը նույնպես ի վիճակի է դուրս գալ ճգնաժամային իրավիճակից:

ՂԱՐԱԲԱՂ

Նոր էլեկտրագիծ Շուշիից Կարմիր շուկա

Մայիսի 27-ից կսկսի գործել Շուշիից Կարմիր Շուկա (ԼՂՀ Մարտունու շրջան) անցկացված բարձրավոլտ էլեկտրահաղորդման գիծը: Ֆինանսավորումը (մոտ 200 հազ. դոլար) «Արցախ» բազմակողմանի ծրագրի շրջանակներում իրականացնում է «Հայասան» համահայկական հիմնադրամը: ԼՂՀ մամուլի եւ լրատվության վարչությունից հայտնեցին, որ նոր էլեկտրահաղորդման գիծը զգալիորեն կբարելավի ենթաշրջանի էներգամատակարարումը: Միաժամանակ աշխատանքներ են տարվում Հադրութի շրջանում բարձրավոլտ գիծ անցկացնելու ուղղությամբ, որի կառուցումը նախատեսվում է ավարտել 2-3 ամսից: ԼՏ

Ղարաբաղն ինքն է ապահովում իր բանակի կարիքները

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ, 25 ՄԱՅԻՍ, ՄՆԱՐՔ: Ղարաբաղի արտադրական կառույցությունների մոտավորապես 70 տոկոսը ներկայումս աշխատում է պաշտպանության բանակի կարիքների համար, այսօր հայտարարեց ԼՂՀ Նախարարների խորհրդի փոխնախագահ Ժիրայր Պողոսյանը: Այդ նպատակով շատ ձեռնարկություններ այստեղ հարկ եղավ ժամանակավորապես վերափոխել ռազմական արտադրանք բողարկելու, ինչպես նաեւ մարտական տեխնիկայի սարքինությունն ապահովելու համար: Փոխվարչապետի խոսքերով ասած, ներկայումս Լեռնային Ղարաբաղը փաստորեն ինքն է լիովին հագցնում եւ կերակրում իր բանակին: Ընդ որում, լայնորեն օգտագործվում է կանանց աշխատանքը, քանի որ 18-ից մինչեւ 45 տարեկան արական բնակչությունը կոչված է իսկական ծառայության բանակում: Ղարաբաղում պահպանվող ռազմական դրության հետեւանքով:

ԼՂՀ-ն չընթացավ ընկերային տնտեսության նորմերի արագացված արմատավորման ճանապարհով, հատկապես մասնավորեցման խնդրում, որը թույլ տվեց առավելագույնս համախմբել ու կենտրոնացնել եղած ռեսուրսները պաշտպանության եւ պատերազմական պայմաններում տնտեսությունը զարգացնելու համար:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

Գների փոխհատուցումը կարող է վտանգավոր հետեւանքներ ունենալ

Հայաստանի Գերագույն խորհրդում պատգամավոր Սեյրան Ավագյանի նախաձեռնությամբ քննարկման դրված որոշման նախագիծը վերաբերում էր հատուցագրված գներով ապրանքների եւ ծառայությունների սակագների բանկացման դեպքում բնակչությանը փոխհատուցումների կարգին: Այդ որոշման նախագիծը մասնավորապես ենթադրում է, որ վերը նշված սակագների բանկացումը պետք է կիրառվի ոչ պակաս, քան հայտարարելուց 15 օր հետո, հատուցագրված գներով ապրանքների 5 տոկոսից ավելի բանկացումը զուգակցել նվազագույն աշխատավարձի համամասնական բարձրացմամբ, եւ Հայաստանի կառավարությունը մեկ շաբաթում պետք է փոխհատուցի հացի, տրանսպորտի եւ այլ ծառայությունների սակագների մայիսին բանկացման հետեւանքով բնակչության եկամուտների վնասներն ամբողջությամբ, համաձայն գործող օրենսդրության: Այս որոշման նախագիծը չընդունվեց: Նախագծի էության մասին պատգամավոր Մելս Սահակյանն այն կարծիքը հայտնեց, թե բնական է, որ ժողովրդի տեսքը ապրանքների պայմաններում պետք է վիճակը ստեղծեն տարբեր տեսակի առաջարկություններ լինեն: Սակայն չպետք է անտեսել նաեւ այն հանգամանքը, թե ինչպիսի հետեւանքներ կունենան նման որոշումները: Օրինակ, եթե քննարկենք Սեյրան Ավագյանի բերած առաջարկները, որոնք առաջին հայացքից բնական են թվում, առայժմ կիանգեցնեն հետեւյալին: Երբ հացը չի փոխհատուցվում այնպիսի սննդամթերքներով, ինչպիսիք են հացաբուլկեղենը, վերմիշելը, մակարոնը, առայժմ եթե հացի գինը բարձրացնում ենք, դրա հետ միասին բարձրանում է նաեւ հացի նկատմամբ պահանջարկը:

Ուստի երբ մենք բարձրացնում ենք հացի գնի փոխհատուցման հարցը, առայժմ վտանգ կա, որ դրանով հացի գինը կարող է նորից բարձրանալ: Նույն հարցը վերաբերում է նաեւ տրանսպորտին: Պետական տրանսպորտի անկայուն աշխատանքի պայմաններում, եթե պետությունը որոշակի փոխհատուցում կատարի, առայժմ միեւնույն է, այսպես կոչված «փափախչիները» գներ կբարձրացնեն: Մելս Սահակյանի կարծիքով, որպեսզի նման որոշում կայացվի, պետք է հստակ հաշվարկ կատարվի, թե գների բարձրացման հետ մեկտեղ որքան փոխհատուցում պետք է կատարվի, դրա հետեւանքները ի՞նչ արձագանք կունենան տուկայում, եւ հետո պետք է հաշվի առնենք, կարո՞ղ ենք առայժմվել լրացուցիչ հացի եւ տրանսպորտի պահանջարկը:

ՀԱՄԱՈՏ

Հայաստանում ընդունվեց օրենք բռնադատվածների մասին

ԵՐԵՎԱՆ, 25 ՄԱՅԻՍ, ՍՆԱՐՔ: Այսօր Հայաստանում ընդունվեց օրենք խորհրդային իշխանության տարիներին բռնադատվածների մասին: Ինչպես հայտնեց խորհրդարանի մարդու ու ազգությունների իրավունքների հարցերի հանձնաժողովի նախագահ Ռաֆայել Պատրյանը, օրենքը մի ամբողջ շարք արտոնություններ է նախատեսում նրանց համար: Օրենքն ուժի մեջ մտնելուց հետո, նրանք կկարողանան բռնագրավված կայքի դիմաց միանվագ փոխհատուցում ստանալ 12 նվազագույն աշխատավարձի չափով, սեփականաշնորհման լրացուցիչ հավաստագիր, ինչպես նաեւ բանկերի արտոնյալ վարկեր: Բռնադատվածներին նաեւ տրվում են տրանսպորտով անվճար երթեւեկելու, հողամաս ստանալու իրավունք, բնակվարձի վճարման եւ այլ արտոնություններ:

1000 դրամանոց թղթադրամը դատապարտված է

ԵՐԵՎԱՆ, 25 ՄԱՅԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ինչպես հայտնի դարձավ Արմենպրեսի թղթակցին, Գերմանիայում «զանգվածային արտադրության» է դատապարտված նոր թղթադրամը՝ 1000 դրամանոցը: Ընդունված կարգի համաձայն, գերմանական կողմը նոր նմուշը վերջնականապես հաստատելու համար Հայաստանից հրավիրել է կենտրոնական բանկի ներկայացուցչին եւ դիզայներին:

Հեղեղները վնասել են Գորիս քաղաքին

ԵՐԵՎԱՆ, 24 ՄԱՅԻՍ, ՍՆԱՐՔ: Մոլեգնած տարերքը էական վնաս է պատճառել արդյունաբերական մեծ կենտրոն Գորիս քաղաքին: Ինչպես այսօր հայտնեցին Հայաստանի արտակարգ իրավիճակների պետական ծառայությունում, հորդառատ անձրեւի ու կարկուտի հետեւանքով հեղեղվել են տնամերձ հողամասերը եւ վնասվել քաղաքամերձ գոտու առանձին կառույցներ: Քաղաքի երկու բնակիչներ վնասվածքներ են ստացել: Գորիսի շրջխորհրդի գործկոմի նախագահ Ռոբերտ Ալեքսանյանի հաղորդման համաձայն, ներկայումս շրջանային հակահեղեղային հանձնաժողովը հաշվարկում է պատճառված վնասը: Միաժամանակ օդերեւութաբանները ոչնում են, թե մայիսի 23-ին Գորիսի շրջանում կես ժամում եղել են 33 մմ տեղումներ:

Գործարկվեց մոնտաժելերի գործարանը

Մի քանի օր է, ինչ վերագործարկվել է Վանաձորի քիմիական մանրաթելերի գործարանը: Առայժմ աշխատում է միայն 2-րդ արտադրությունը, օրական բողարկելով շուրջ 3 տ ացետատային ժապավեն: Մայիսի 23-ի դրությամբ գործարանը բողարկել է 60 մլն դրամի արտադրանք: ԼՏ

ՈՒՍՈՒՄՆԱՐ ԱՅՍՏԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակչության Դ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Թելեֆոն 562941, AT&T 0 88521 151065
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՀԱՍԼԵՏ ԳԱՍՊԱՐԵԱՆ / 529221
Տնօրեն
ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ / 562863
A STYLE համակարգչային ծառայություն / 581841
Ոճը եւ տարածները ՊԱՏԵԼ ԴԱԼԱԲԵԱՆԻ
Apple Macintosh համակարգչային շտաբագիր «Ազգ» թերթի
Azg armenian daily
LIBERAL DEMOCRATIC NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 375010
Published in U.S.A. by AZG Publishing Co., 22122 Sherman Way, Suite 203, Canoga Park, CA 91303, Call (818) 598-0423 Fax: (818)340-9819 for subscription rates.
Publisher - Հրատարակիչ
Dr. Krikor Krikorian - Դոկտ. Գրիգոր Գրիգորեան
Executive Director - Տնօրէն
Vartan Karaoghlanian - Վարդան Գարաւողլանեան
Production Manager - Raffi Shoubookian
Արտադրութիւն
Բաֆֆի Շուպուխեան
«ԱԶԳ» տարբերը հրատարակվում է ԱՄՆ «ՍԻՐԻԱՆԻ» ՍՊԸ-ի հրատարակչական կարգով
Հեռախոս 7 8852 281425, Ֆաքս 7 8852 285082
E-MAIL INTERNET ROOT. YEREVAN @ REX. IASNET. COM

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՇՐՋԱՆ ԱՊՀ

ԿԱՐԾ

Ռուսաստանի ԱԳՆ-ն խորհուրդ է տալիս վարձկան չդառնալ

ՄՈՍԿՎԱ, 25 ՄԱՅԻՍ, ՓՍՍՏ- Ռուսաստանի արտգործնախարարության բանբեր Գրիգորի Կարասինը հերթական ճեպազրույցում հայտարարել է, որ գնալով ավելանում է այն ռուսների թիվը, որոնք իբրեւ վարձկան մեկնում են նախկին ԽՍՀՄ տարածքներ: Նա ընդծել է, որ համաձայն միջազգային պարտավորությունների, Ռուսաստանը կդիմի բոլոր միջոցներին՝ իրավական մարմինների միջոցով այդ ընթացքը կասեցնելու հեմար: ԱԳՆ-ն դիմել է Ռուսաստանի այն քաղաքացիներին, որոնք արդեն դարձել են կամ պատրաստվում են դառնալ «հաջողության զինվորներ»՝ սթափվելու եւ խաղաղ կյանքի վերադառնալու կոչով:

Խորհրդակցում են հեռախույզները

ՄՈՍԿՎԱ, 25 ՄԱՅԻՍ, ՓՍՍՏ- Մոսկվայում բացվեց Ռուսաստանի հակահեռախուզության մարմինների, այդ թվում՝ տարածաշրջանի ներկայացուցիչների, եռօրյա խորհրդակցությունը: Այստեղ սպասվում է նախագահ Բորիս Ելցինի ելույթը, որը, ըստ տեղեկությունների, ելնելով ստեղծված իրողություններից, հստակ խնդիրներ է՝ առաջադրելու հեռախուզական մարմիններին:

Օստանկինոյի լրագրողները զրկվեցին հավատարմագրերից

ԿԻԵՎ, 25 ՄԱՅԻՍ, ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ԱՐՄԵՆՊՐԵՍ- Ուկրաինայի արտաքին գործերի նախարարությունը երեքշաբթի որոշում է ընդունել հավատարմագրությունից զրկելու «Օստանկինո» հեռուստարանկայության լրագրողներին, որոնք աշխատում են Ուկրաինայի տարածքում: Որոշումն ընդունվել է այն գործողությունների կապակցությամբ, որոնք անհամաձեղելի են լրատվության մասին միջազգային հասկացությունների հետ: Նման քայլի համար առիթ է եղել «Օդեսայի, Դրիմի եւ Արեւելյան Ուկրաինայի իրադարձությունների գրգռիչ լուսաբանումը»:

Իր հրամանագրով Ազգային ժողովում քվորումը կրճատելու խնդրանքով նախագահին ուղղված Ադրբեջանի խորհրդարանի 29 ժողովրդական պատգամավորների դիմումը ընդունվեց հանրապետության խորհրդարանի նիստ անցկացնելու աղաղդյուն փորձից հետո, որի պատճառը քվորումի բացակայությունն էր: Պատգամավորներն իրենք, խորհրդարանական ներկաներից ոչ ոք չհիշեց, որ կա

ԲԱԿՈՒ

Ադրբեջանի օրենսդիր մարմինը Ալիեւին մղում է անօրինական քայլի

նի նախագահ Ռասուլ Գուլիեւը եւ խորհրդարանի իրավաբանները խոստովանեցին, որ պետության ղեկավարի այդ քայլը կանխահայտորեն անօրինական է, բայց այն բանից հետո, երբ մայիսի 18-ին մի խումբ ժողովրդական ընտրյալներ հրաժարվեցին մասնակցել օրենսդիր մարմնի աշխատանքին, մինչեւ որ օրակարգի մեջ չմտցվի Բիշքեկի արձանագրության քննարկումը, բավականաչափ քվով քվեներ հավաքելը դարձավ անհնար, եւ խորհրդարանի հետագա աշխատանքի ապահովման համար նրանք այլ ելք չեն տեսնում:

Նիստի սկզբից Ռասուլ Գուլիեւը նշեց, որ ստեղծված դրությունից դուրս գալու միայն երեք հնարավորություն կա. առաջինը՝ բողոքող գործընկերներին համոզել, որ վերադառնան նիստերի դահլիճ, ինչին, նախագահի կարծիքով, նրանք հազիվ թե համաձայնեն, երկրորդ տարբերակը քվորումը կրճատելու խնդրանքով նախագահին ուղղված դիմում ընդունել, եւ երրորդը, հանրապետության նախագահի կողմից խորհրդարանի արձակումը: Գուլիեւն ինքը հայտարարեց, որ կողմնակից է երկրորդ տարբերակին:

Համընդհանուր զարմանք հարուցեց Ադրբեջանի վարչապետ, պատգամավոր Սուրաթ Հուսեյնովի ելույթը: Այն մարդը, որն անցյալ տարվա հունիսին գործել էր խստորեն ուժի դիրքերից, այս տարվա մայիսին միակն էր, որ առաջարկեց ընթանալ փոխզիջման ուղիով եւ փորձել հեռացածներին համոզել, որ մասնակցեն խորհրդարանի աշխատանքին: Բայց այդ առաջարկությունը արձագանք չգտավ, եւ, ի վերջո, կառավարության ղեկավարը եղավ միակը, որ չմասնակցեց քվեարկությանը: Իսկ քվեարկությունը ցույց տվեց, որ ներկաների մեծամասնությունը կողմնակից է դիմելու պետության ղեկավարին:

Ներկաներից ոչ ոք չհիշեց, որ կա նաեւ չորրորդ ուղին կատարել ընդդիմության պատգամավորների պահանջը եւ քննարկման դնել խորհրդարանի նախագահի ստորագրած Բիշքեկի արձանագրությունը:

Ինչպես Խաբար սեղվիս գործակալության թղթակցին հաղորդեց Ադրբեջանի Գերագույն խորհրդի աշխատակազմի աշխատակիցներից մեկը, որը ցանկացավ անհայտ մնալ, տպավորություն է, որ խորհրդարանում քվորումը 34-ից մինչեւ 26 կրճատելու մասին նախագահ Հեյդար Ալիեւի ակնկալվող հրամանագրից հետո օրենսդիր մարմինը Ազգային ժողովի պատգամավորների թիվը 51-ից կավելացնի մինչեւ 70-75:

Հարկ է նշել, որ խորհրդարանի նախագահ Ռասուլ Գուլիեւի, ժողովրդական՝ պատգամավորների եւ Գերագույն խորհրդի քարտուղար Սաֆա Միրզոեւի խոստովանությամբ, պետության ղեկավարի կողմից քվորումի վերանայումը անօրինական է:

Դիտորդների կարծիքով, կարելի է այն ենթադրությունն անել, որ վերջերս ստեղծված Ազգային դիմադրության շարժման ներկայացուցիչները խստիվ հանդես կգան այդ որոշման դեմ: Եվ այն հանգամանքը, որ խորհրդարանի ներկայացուցիչները դիմեցին ակնհայտորեն անօրինական քայլի, կարող է հանգեցնել ընդդիմության պատասխան հակազդեցությանը: Թե այն ինչպիսին կլինի, ցույց կտա Ազգային դիմադրության շարժման առաջիկա նիստը:

ՆՏ

ՄՈՍԿՎԱ

Ռուսաստանի 740 քաղաքացիներ սպիտակ բացիլակիր են

ՄՈՍԿՎԱ, 24 ՄԱՅԻՍ, ՌԻԱ-ՄՆԱՐՔ- Ներկայումս Ռուսաստանի 740 քաղաքացիներ, այդ թվում 281 երեխաներ հայտնի են որպես սպիտակ բացիլակիրներ: Մահացել է 105 մարդ, այդ թվում 64 երեխա: Ռուսաստանում արձանագրված են նաեւ 450 վարակված օտարերկրացիներ: Այս տվյալները բերվեցին Պետդումայում «Ռուսաստանում սպիտակ տարածումը կանխելու մասին» օրենքի նախագիծը եւ այս կապակցությամբ բերված օրենսգրքում նախատեսվող փոփոխությունները կայացած խորհրդարանական ունկնդրումների ժամանակ քննարկելիս: Նշվեց, որ Ռուսաստանում վարակի զգալի մասը ծագում է բուժաշխատողների մեղքով: Մասնագետների հաշվարկներով բույլ են տալիս ոնդել, որ արձանագրվածներից բացի Ռուսաստանում պարում են առնվազն 1000 բացիլակիրներ, որոնք չգիտեն իրենց վարակման մասին: Մոտ ժամանակներս Ռուսաստանում բացիլի տարածումը կարագանա, քանի որ ընդլայնվում են Ռուսաստանի տնտեսական ու մշակութային կապերը բացիլակիր երկրների հետ:

Միեւնույն ժամանակ, Ռուսաստանում մշակվել եւ գործում է այդ վարակի համաճարակաբանական վերահսկման համակարգ, որի շնորհիվ հաջողվել է զգալիորեն կրճատել վարակի ներթափանցումը: Սակայն, ընդգծվեց ունկնդրումների ժամանակ, դեռեւ է օրենսդրական կարգով վավերացվի այն:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Վաճառում եմ 4 սենյականոց բնակարան: Հասցեն Դավիթաշեն, 2-րդ բաղամաս, 3-րդ շենք, բն. 4 (2-րդ հարկ)

հեռ՝ 286091 (զանգահարել մինչեւ ցերեկվա ժամը 2-ը):

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Վաճառում եմ գերմանական դաշնամուր:

Զանգահարել՝ 23-14-95

MARINE

Տուրիստական կազմակերպությունը հրավիրում է ուղերթների
Երեւան-Սինսկ-Լեհաստան
Երեւան-Սինսկ-Լեհաստան-Սլովակիա
7 օրով

Մեր հասցեն է.
«Երեքունի» հյուրանոց, 1-ին մասնաճեմ
4-րդ հարկ, 423 սենյակ հեռ. 56-04-51
Ուղերթները կատարվում են ամիսը 1 անգամ:
Ֆիրման կատարում է նաեւ Երեւան-Սինսկ չվերթի տոմսերի վաճառք: Չվերթը ամեն հինգշաբթի

8 3

ՄԱՐԻՆԵ-83

ECONOTRANS

Սիրալիր ընդունելություն

Բարձրակարգ սպասարկում

Մատչելի գներ

ECONOTRANS

ԷԿՈՆՈՏՐԱՆՍ

Բոլոր նրանք, ովքեր ունեն ԱՄՆ մեկնելու թույլտվություն, կարող են դիմել ԷԿՈՆՈՏՐԱՆՍ-ի Երեւանյան գրասենյակ:

Թռիչքները տեղի կունենան հունիսի 5-ին, 19-ին, այնուհետեւ՝ յուրաքանչյուր 14 օրը մեկ

Միակ ուղիղ չվերթը Երեւան-Լոս Անջելես

հասցեն Դավթաշեն-6 զանգահարել ամեն օր ժ.10-17-ը, բացի կիրակի օրերից հեռ՝ 27-69-73, 27-48-87

ՈՒԶԲԵԿՍՏԱՆ

Տաշքենդում այրվեց 14 տոննա հաշիշ

ՏԱՇՔԵՆԴ, 25 ՄԱՅԻՍ, ՆՈՎՈՍՏՆ ՏԱՊԱՆ- Այստեղ այլումինի համաձուլվածքների գործարանում այրվեց 14 տոննա հաշիշ 650 միլիարդ դոլար ընդհանուր արժողությամբ: Արարողությանը ներկա էին ՄԱԿ-ի ներկայացուցիչներ, ԱՊՀ եւ Ուզբեկստանի ղեկավարներ, առողջապահության նախարարության եւ շրջակա միջավայրի պահպանության պետկոմիտեի աշխատակիցներ:

Հաշիշը բռնագրավվել էր Ուզբեկստանի տարածքում, երբ այն փորձում էին բերել Աֆղանստանից: Հատուկ ծառայությունների տվյալների համաձայն, թմրադեղերի այդ խճակությունը նախատեսված էր փոխադրել Բելգիա եւ Կանադա:

Մամլո ասուլիսում Ուզբեկստանի ազգային անվտանգության ծառայության ղեկավար Վիկտոր Վիվանչինը հայտնեց, որ 1992 թ. համանման իրավիճակում բռնագրավվել են մոտ 16 տոննա տարբեր թմրամիջոցներ (հաշիշ, մարիխուանա, ափիոն եւ մորֆին), որոնք օգտագործվում են ուռուցքաբուժության մեջ: Մորֆինը հանձնվել է հանրապետության առողջապահության նախարարությանը:

ՄԱԿ-ի թմրանյութերի վերացման միջազգային կոմիտեն հայտնեց, որ Ուզբեկստանի մախային ծառայությունները ներկայումս հայտնաբերում են հանրապետությունով եվրոպա եւ Ամերիկա փոխադրվող թմրադեղերի մինչեւ 10-12 տոկոսը, ուստի կոմիտեն շահագրգռված է Ուզբեկստանի մախատան հետ համատեղ աշխատել:

Վերջերս Ուզբեկստանին տեխնիկական օգնություն ցույց տալու պայմանագիր ստորագրվեց ուժային կառույցների ամրապնդման նպատակով եւ 1,5 տարվա համար կես միլիարդ դոլարի օգնություն հատկացվեց: ՄԱԿ-ի թմրադեղերի վերահսկման միջազգային ծրագրի գործադիր տնօրեն Ժորժիո Ժանկոմելլին նշեց, որ թմրաբիզնեսի դեմ պայքարելիս կարելի է լավ արդյունքների հասնել, փոփոխելով համապատասխան օրենսդրական հիմքը, այսինքն բոլոր փասաթղթերը համապատասխանեցնելով միջազգայիններին: Ուզբեկստանի կառավարությունն արդեն մեկ տարուց ավելի աշխատում է այդ նախագծի վրա:

Միաժամանակ, արտասահմանի զանգվածային լրատվության միջոցների այն մղումների առթիվ, թե Ալմա-Աթայում մարդու իրավունքների միջազգային կոնգրեսի ընթացքում կալանավորվել եւ արտաքսվել են Ուզբեկստանի ազգային անվտանգության ծառայության աշխատակիցներ, փոխգնդապետ Վիվանչինը հայտարարեց. «Ուզբեկստանի ազգային անվտանգության ծառայության աշխատակիցներ Ղազախստանից չեն արտաքսվել: Ուզբեկստանի ԱԱԾ-ն Ղազախստանում որեւէ ձեռնարկում չի իրականացրել: Սակայն, ինչպես պարզ է դառնում այլ աղբյուրներից, ուզբեկ չեկիստների արտաքսման փաստ իրոք եղել է: Ճիշտ է, հնարավոր է, որ գործած լինեն ՆԳՆ հատուկ ստորաբաժանումներ, քանի որ քաղաքականապես անբարեհույս էաս անձանց նկատմամբ քրեական գործեր են սարքվում»:

ՎՐԱՍՏԱՆ

Պարեկախմբեր Թբիլիսիի փողոցներում

ԹԲԻԼԻՍԻ, 25 ՄԱՅԻՍ, ՆՈՎՈՍՏՆ ՏԱՊԱՆ- Համաձայն Վրաստանի պաշտպանության նախարար Նադիբաիձեի հրամանի մայրաքաղաքի փողոցներում պարեկում են զինվորական ոստիկանության աշխատակիցները: Պարեկության գլխավոր նպատակն է ստուգել զինվորական համազգեստով մարդկանց: Վերջերս հաճախակի են այն դեպքերը, երբ համազգեստավոր մարդիկ հակաօրինական գործողություններ են կատարում: Վրաստանի հեռուստատեսության տվյալների համաձայն, պարեկներն արդեն բռնել են զինվորական համազգեստ կրելու իրավունք չունեցող տասնյակ մարդկանց:

Միաժամանակ, Վրաստանի ղեկավարության որոշմամբ այսօր եւ մայիսի 26-ին կանցկացվեն զորահանդես եւ այլ հանդիսավոր միջոցառումներ: Մի շարք ընդդիմադիր քաղաքական գործիչներ հայտարարում են, թե զորահանդեսի անցկացումը Վրաստանի համար վիրավորական է Արխազիայում կրած պարտությունից հետո: Ռադիոտեսարգարությամբ Էդուարդ Շեւարդնաձեն հույս հայտնեց, թե Անկախության օրը ընդդիմությունը շրջանի իրադրության սրսկայությունացմանն ուղղված որեւէ քայլ չի ձեռնարկի:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Սահմանադրություն

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Սահմանադրությունը ազգային միասնության երաշխիքն է

ՌԱՖԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ
Պրոֆեսոր

Վարչվեց սահմանադրական քննարկումների առաջին փուլը: Այն նվիրված էր Հայաստանի Հանրապետության Սահմանադրության ընդունման կարգին: Թվում էր, թե ազգային իշխանությունները ՀՀ նախագահ, Գերագույն խորհրդի եւ սահմանադրական միասնական օրինագիծ ներկայացրած վեց կուսակցությունները, որոնց կարելի է դասյանականորեն անվանել «ընդդիմություն», ելնելով Սահմանադրությունն անդայման ունենալու դեպքական մտածողությունից եւ հայրենասիրական մղումներից, կձգտեն փոխադարձ զիջումների եւ իրենց ուժերը կնդաստակամեն ՀՀ Սահմանադրության մեկ միասնական տեքստի մշակմանը, այն Սահմանադրության, որն ընդունելի կդառնար եթե ոչ բոլորի իշխանությունների, քաղաքական կուսակցությունների, ամբողջ ժողովրդի, առյա գոնե մեծամասնության համար: Ա՛վա՛ղ, դա տեղի չունեցավ: Ավելին, ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը եւ, նրան հետեւելով, ՀՀԾ դասգամավորական խմբակցության գաղափարախոսները ավելի սրեցին անմիաբանությունը, վտանգելով հիմնադրել Սահմանադրությունը միայն համաժողովրդական քվեարկությամբ՝ հանրաքվեով, իսկ ընդդիմությունը՝ միայն Սահմանադիր ժողովով ընդունելու անհրաժեշտությունը: Բայց հասկանալի այնտեղ, որ ՀՀ նախագահը տարաձիրեն վարկաբեկեց մարդկային դասմության դարերի փորձով ստեղծված ու հաստատված, միջազգային ճանաչում ստացած այնպիսի հասկացություններ (դրուագներ), ինչպիսիք են ազգային գաղափարախոսությունը, ազգային միասնությունը, հասարակական համաձայնությունը, ազգային (ներդեսական) օրենսդրությունը: Հարցը հանգեցվեց նրան, որ ցանկացած երկրի սահմանադրության վրա կարելի է գրել «Հայաստան» բառը, եւ այն կդառնա Հայաստանի Սահմանադրություն: Երկուսն էլ ընդգծվեց, որ ՀՀ Գերագույն խորհրդի սահմանադրական հանձնաժողովի կողմից մշակված նախագահական կառավարման ձեւ եւ ընդդիմության կողմից մշակված խորհրդարանական կառավարման ձեւ ամրագրող տեքստերը, իբր թե, հնարավոր չէ համադրել, ստեղծել Սահմանադրության մեկ միասնական տեքստ, որովհետեւ դրանք կազմված են տարբեր համադրյալներից (կոնցեպցիաներից) ելնելով:

Վերը հիշատակված առաջնային գաղափարախոսության վերլուծությունը խնդրո առարկայից դուրս է եւ ակնհայտ է նաեւ առանց հատուկ քննարկման: Ուստի միանգամից անցնենք Սահմանադրության մեկ միասնական տեքստի մշակման, հետեւաբար եւ նրա ընդունման միասնական կարգի՝ հնարավորության՝ մասին մեր հայեցակետերի շարադրմանը:

Առաջին. Սահմանադրության ընդունման կարգը, կամ որ նույնն է՝ ձեւը երկրորդական է: Այն անցած է Սահմանադրության բովանդակությունից: Այլ խոսքով կարեւորը ոչ թե ընդունման կարգը, այլ այն Սահմանադրության բովանդակությունն է, որը նույն հաջողությամբ կարող է ընդունվել հանրաքվեի միջոցով, մշակվել եւ ընդունվել Սահմանադիր ժողովի կողմից, կամ էլ՝ օրինական կարգով ընտրված մեկ այլ մարմնի, ասենք Գերագույն խորհրդի կամ Սահմանադրական ժողովի (Սահմանադրական ասամբլեայի) կողմից մշակվելու, քննարկելու եւ հանրաքվեի դրվելու միջոցով: Մինչդեռ ակնհայտ է, որ եթե հակադիր կողմերը կարողանան վերանալ, բարձր կանգնել իրենց իշխանատենչական կամ նեղ կուսակցական, խմբային շահերից, միասնական կամք եւ արիություն դրսեւորեն մեկ միասնական Սահմանադրություն ունենալու հարցում, ապա մեր առջեւ կանգնած բարդ խնդիրը միանգամայն լուծելի կդառնա: Մոռանալով ամենաէականը՝ Սահմանադրության բովանդակությունը կամ որոշակի միտումներով շահարկելով այդ հարցը, կողմերը բանավիճում են երկրորդականի շուրջը: Մենք գտնում ենք, որ հնարավոր չէ Սահմանադրության ընդունման կարգ որոշել առանց նախապես իմանալու, թե ինչ բովանդակություն ունի այն: «Սա չլինի, ՆԱ լինի» էկլեկտիկան տվյալ դարաշրջանում չափազանց վնասակար է:

Երկրորդ. կամա թե ակամա մենք ստիպված է դասասխանենք մեկ հարցի՝ իսկ ինչպիսի՞ք են նշված երկու սահմանադրությունների բովանդակությունները, առանցքային մի հարց, որի շուրջը եւ առաջացել է երկդասակություն եւ որը հնարավորություն չի տալիս կազմել Սահմանադրության համաձայնողական տեքստ կամ հանգել Սահմանադրություն ընդունելու միասնական կարգի:

Պետք է ասել, որ սահմանադրական երկու նախագծերն էլ բավականաչափ կատարյալ են, մանավանդ՝ իրավաբանական ձեւակերպումների առումով: Դրանցում հաշվի են առնված ոչ միայն հայ իրավագիտության եւ սահմանադրական պրակտիկայի նվաճումները, իրավաստեղծ գործունեության փորձը, այլ նաեւ սահմանադրական միջազգային ստանդարտները, մարդու եւ քաղաքացու իրավունքներն ու ազատությունները ամրագրող միջազգային իրավական հանրագիտաչ սկզբունքները, փորձագիտական հիմնարկների եւ առանձին փորձագետների, այդ թվում արտասահմանյան, նկատառումներն ու դիտողությունները, բայց, ցավոք սրտի, միայն այն չափով եւ այն սահմաններում, որչափով որ դրանք ձեռնտու են կողմերից յուրաքանչյուրին: Հենց այդ է պատճառը, որ կողմերը հակադրվել են միմյանց, ցանկություն չունենալով ընդառաջ գնալ իրար, բանական փոխզիջումներ անել, ստեղծել գործադիր եւ օրենսդիր մարմինների փոխադարձ զսպումների այնպիսի կառուցակարգեր (մեխանիզմներ), որոնք հետագայում բացառեն այդ իշխանություններից որեւէ մեկի կողմից ամբողջատիրության կամ անձնիշխանության հաստատման հնարավորությունը Հայաստանում:

Սահմանադրական հանձնաժողովի կողմից մշակված Սահմանադրության տեքստը իրավամբ կարելի է անվանել «ուժեղացված նախագահական»: Այստեղ հանրապետության նախագահի ձեռքում է կենտրոնացված ոչ միայն ամբողջ գործադիր իշխանությունը՝ վարչապետին նշանակելն ու կառավարություն կազմելը, այլ նաեւ, ընդհանրացված ձեւով ասած դասական գրեթե բոլոր մարմինների կազմավորման լիազորությունը, որ նա իրականացնելու է իրեն կից եւ իր իսկ նախագահությամբ գործող Արդարադատության խորհրդի «եզրակացություններ»-ով: Փաստորեն նա է տնօրինում նաեւ տնտեսական հիմնահարցերի մարմինների բախտը, որովհետեւ նախատեսվում է Հայաստանում կատարել մարզային բաժանումներ, որտեղ մարզպետներին դարձյալ նախագահն է նշանակելու, իսկ վերջինս իր հերթին իրավունք ունի ազատելու տեղական հիմնակառավարման գլուխ կանգնած քաղաքապետերին, բաղային (շրջանային) համայնքների ղեկավարներին, գյուղապետերին: Սա, ըստ էության, ի չիք է դարձնում տեղական հիմնակառավարումը, տեղերում եւս հաստատում է պետական կառավարում:

Ըստ քննարկվող նախագծի, ապագա Ազգային ժողովը որեւէ մասնակցություն չունի վարչապետի նշանակմանը, կառավարության կազմավորմանը, ՀՀ Գերագույն դատարանի եւ այլ դատարանների ստեղծմանը, իսկ Սահմանադրական դատարանն այնպես է կազմավորվում, որ դարձյալ կախման մեջ է ընկնում հանրապետության նախագահից: Այդ դատարանի կազմի կեսին նշանակում, իսկ դատարանի նախագահի թեկնածությունը Ազգային ժողովի հաստատմանն է ներկայացնում դարձյալ հանրապետության նախագահը, փաստորեն այստեղ էլ ստանալով առավելություն, որը չի կարող ապահովել գործերի օբյեկտիվ քննությունը սահմանադրական արդարադատությունը:

Սահմանադրական հանձնաժողովի նախագիծը արհեստական խոչընդոտներ է ստեղծում սփյուռքահայության՝ միաժամանակ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելու ճանապարհին, լիովին անտեսում է Հայ Դատը, մեր ժողովրդի արդարացի Պահանջատիրությունը, որին այսօր անդադարում են ուրիշ երկրների՝ ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Ռուսաստանի Դաշնության, Իսրայելի խորհրդարաններն ու կառավարությունները:

Վեց կուսակցություններն իրենց հերթին, հակադրվելով նախագահական էքսպանսիային, իրենց ստեղծած Սահմանադրության տեքստում վերացրել են Հայաստանում արդեն իսկ ստեղծված եւ գործող նախագահական հանրապետության ձեւը, նախագահին չեն օժտել ժողովրդի կողմից ընտրված լինելու, այն է՝ առաջնային մանդատ ունենալու իրավունքով, սեղմել են նրա իրավասությունները այն աստիճան, որ նրան չեն վերադարձրել նույնիսկ անհետաձգելի լուծում պահանջող եւ միջազգային դրակտիկայում նախագահներին տրամադրվող այնպիսի լիազորություններ, ինչպիսիք են կառավարության կազմավորմանը մասնակցություն ունենալը, արտաքին քաղաքականության ընդհանուր ղեկավարումը, արտասահմանյան երկրներում դիվանագիտական ներկայացուցիչներին անմիջականորեն նշանակելը, անհետաձգելի դեպքերում զինված ուժերի օգտագործումը եւ այլն: Այս նախագծում արդեն Հայ Դատը ներկայացված է խիստ ցցուն մարտահրավերի տեսքով, որն անընդունելի է միջազգային իրավական դարկեցության տեսակետից:

Միաժամանակ պետք է ընդգծել, որ վեցյակի նախագիծը դարձնում է շատ ավելի դրական ինստիտուտներ, քան նախորդը, մանավանդ՝ անկախ դատական իշխանություն եւ անկախ տեղական ինքնակառավարում ունենալու հարցերում:

Մի քանի խոսք սահմանադրական երկու նախագծերի նախապատմության մասին, որը լույս կսփռի դրանց հակադրության փաստի վրա: Սահմանադրական հանձնաժողովը կազմավորվել է այն ժամանակ, երբ ՀՀ Գերագույն խորհրդում դեռեւս չկային կուսակցական խմբակցություններ: Հանձնաժողովի կազմի ճնշող մեծամասնությունը իշխող քաղաքական կուսակցության (ՀՀԾ-ի) անդամներ են:

Ընդդիմության չորս ներկայացուցիչները սփռված էին դուրս գալ հանձնաժողովից, որը եւ հանգեցրեց «ուժեղ ձեռք»-ի ջատագովների կողմից ուժեղացված նախագահական կառավարում նախատեսող նախագծի ընդունման: Եվ որովհետեւ Սահմանադրական հանձնաժողովի կազմը չի արտացոլում այսօրվա իրողությունները՝ բազմակուսակցականությունն ու բազմակարծությունը, իշխանության համար մղվող քաղաքական դայքարի առդահովման երաշխիքները, ուստի ընդդիմության մշակած նախագիծը իր սուր ծայրով ուղղված է առաջին նախագծի դեմ: Դրանով էլ դայմանավորված է երկու նախագծերի դիտարկումն՝ անհաշտ բնույթը, որը եւ թելադրում է Սահմանադրության ընդունման կարգի երկու մոտեցումներ: Սակայն պետք է խոստովանել, որ քաղաքական ուժերի հարաբերակցությունն այսօր հնարավորություն չի տալիս ընդունել այդ մոտեցումներից որեւէ մեկը: Սա անհերքելի փաստ է, որի հետ պետք է հաշվի նստել, որոնել-գտնել Սահմանադրության մշակման եւ ընդունման համընդհանուր (համաձայնողական) ձեւ:

Երրորդ. մեր խորին համոզմամբ Հայաստանի այսօրվա ընկերային, տնտեսական, քաղաքական վիճակը, դեպքական մարմինների, դաշտոնատար անձանց եւ քաղաքացիների իրազեկության ու իրավագիտակցության մակարդակը անհնարին են դարձնում եւ հանրաքվեն, եւ Սահմանադիր ժողովը: Վերջերս «Կարծիք» հեռուստաշարի հարցումները ցույց տվեցին, որ ժողովրդի ավելի քան 75 տոկոսը նույնիսկ տեղյակ չէ, որ Հայաստանում սահմանադրական գործընթաց կա: Էլ ո՞ր մնաց, որ ժողովուրդը կարողանա ճիշտ կողմնորոշվել կառավարման տարբեր ձեւեր ներառող սահմանադրությունների առավելությունների կամ թերությունների հարցում: Ամենակարեւորը՝ չպետք է անտեսել, որ ոչ Սահմանադրական հանձնաժողովի եւ ոչ էլ վեցյակի նախագծերը առանձին-առանձին չեն արտահայտում իշխանությունների եւ քաղաքական ուժերի ու նրանց բիկուսիում կանգնած ժողովրդավարական խավերի միասնական, ընդգծում եմ, միասնական, տեսակետը: Հենց միայն այս հանգամանքը խոսում է այն մասին, որ ժողովրդի կողմից մեխանիկորեն «այո»-ի արժանացած Սահմանադրությունը հետագայում ոչ միայն անկատար, այլեւ անկայուն կլինի, կբարդանակի մնալ քաղաքական դայքարի առարկա, անընդհատ փոփոխվելու կարիք կզգա եւ այլն: Հանրաքվեն, անշուշտ, Սահմանադրություն ընդունելու ժողովրդավարական ձեւ է: Բայց ժողովուրդն այսօր զբաղված է առօրյա ծանր հոգսերով, ժամանակ եւ հնարավորություն չունի խորանալու քննարկվող հարցում, անտարբեր է քվեարկությունների նկատմամբ (վկայությունը՝ ՀՀ դասգամավորների թափուր տեղերը): Հետեւաբար պետք չէ ժողովրդին սահմանադրական տարբեր նախագծերից որեւէ մեկի ընտրության հարցում բաժանել երկու հակադիր բանակների: Չէ՞ որ իշխանություններն օժտված են ժողովրդի կողմից տրված մանդատով, իսկ կուսակցությունները՝ վստահությամբ: Հենց նրանք էլ պետք է փոխհամաձայնությամբ լուծեն Սահմանադրության հարցը, առանց ժողովրդին նորից անհանգստացնելու, առանց իրենց կարծիքը ժողովրդին փաթաթելու: Իշխանություններն ու կուսակցություններն իրենք պետք է դասասխանատու լինեն Սահմանադրության որակի համար եւ ոչ թե ձգտեն հիմք ստեղծել հետագայում դատճառաբանելու, թե իրենք մեղք չունեն, ժողովուրդն է ընդունել այն:

Ճիշտ նույն կերդ Հայաստանում այսօր հնարավոր չէ կիրառել Սահմանադրությունը Սահմանադիր ժողովով ընդունելու եղանակը: Վերջինս նույնպես Սահմանադրության ընդունման իսկական ժողովրդավարական ձեւ է: Երբ Սահմանադիր ժողով ընտրվեր ժամանակին, ասենք՝ մեկ-երկու տարի առաջ, ապա ոչ միայն, որոշես բոլոր իշխանություններից մեկին կդներ իր տեղը, կնախատեսեր փոխադարձ զսպումների հակակշիռներ, Սահմանադրության բովանդակությամբ կաղդահովեր հասարակական համերաշխությունը: Նրա ընդունած Սահմանադրությունը կլիներ կայուն, որովհետեւ բազմակուսակցականության հիման վրա ժողովրդի կողմից ընտրված անձինք, բազմակարծության հաշվառմամբ կմշակեին ու կընդունեին այն: Ցավոք, մենք արդեն ուշացել ենք: Սահմանադիր ժողով ընտրելու համար նախ եւ առաջ անհրաժեշտ է օրենքներ ընդունել նրա իրավասության, նրա ընտրության կարգի մասին, օրենքով նախատեսված ժամկետներում անցկացնել նախընտրական արշավ, Սահմանադիր ժողովի ընտրությունից հետո անհրաժեշտ ժամկետ եւ միջոցներ տրամադրել Սահմանադրությունը մշակելու եւ ընդունելու համար: Այս բոլորը կդահանջեն մեկ տարուց էլ ավելի ժամանակ, իսկ դա նշանակում է, որ առանց Սահմանադրության ստեղծված ենք լինելու գնալ Ազգային ժողովի ընտրություններին: Իսկ դա իր հերթին նշանակում է, որ Սահմանադրություն ընդունելուց հետո դետք է սկսենք դետական կառույցները, նրանց իրավասությունները, մեր ամբողջ օրենսդրությունը համարեցնել նոր Սահմանադրությանը, առաջացնելով դետական եւ հասարակական հարաբերությունների անկայունություն, նոր հեղհեղուկ վիճակ:

Վերը նշված դատճառներով հնարավոր է նաեւ, որ Սահմանադիր ժողովի ընտրությունները երկար ժամանակ չկայանան: Կայանալու դեպքում անգամ հայտնի չէ, թե քաղաքական սուր դայքարի դայմաններում ինչ որակի Սահմանադիր ժողով կարող է ընտրվել: Մեր իշխանությունների, քաղաքական կուսակցությունների, դաշտոնատար անձանց եւ քաղաքացիների իրավագիտակցության առկա մակարդակը, ամենայն հավանականությամբ, հնարավորություն չեն տա ընտրել հիմնականում իրավասու անձանց, հատկապես

digitised by A.R.A.R.@

ղեսականագետների, տնտեսագետների, սոցիոլոգների, դատավարագետների եւ այլն: Հակառակ դեղում այդ ամբողջ գործընթացը կարող է ավարտվել աղաղյուն եւ մենք նորից մտնենք փակուղի: Մինչդեռ մեզ անհրաժեշտ Սահմանադրություն է ղեսք, որղեսզի կայունանան հասարակական եւ ղեսական հարաբերությունները, կատարվի իշխանությունների հստակ տարանջատում, հետեւաբար եւ՝ այս կամ այն բնագավառում ղատասխանատվության բաժանում, սահմանվեն արտաքին եւ ներքին, այդ թվում՝ տնտեսական քաղաքականության հիմունքները, քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները, դրանց իրականացման երաշխիկները, նոր հիմունքներով ստեղծվեն իրավապահ մարմիններ, դատարան, աղահովվի օրինականությունը եւ այլն, եւ այլն:

Չորրդ. ՀՀ Գերագույն խորհրդում անցկացված քվեարկությունները ցույց տվեցին, որ Սահմանադրությունը հանրաքվեով ընդունելուն կողմ եղ[illegible]ին մասնակցող 203 ղատգամավորից 117-ը, Սահմանադիր ժողովին՝ 50-ը, Սահմանադրության նախագիծը Գերագույն խորհրդում քննարկելուց եւ հավանության արժանանալուց հետո հանրաքվե նշանակելուն՝ 135-ը, իսկ Սահմանադրական ժողովի միջոցով ընդունելուն եւ ապա՝ հանրաքվեի դնելուն՝ 23-ը: Վերջին Սահմանադրության ընդունման միջանկյալ եղանակի առաջարկին ձեռնղա քվեարկեցին 103 ղատգամավոր, որը խոսում է այն մասին, որ, այնուամենայնիվ, երկու կողմի ղատգամավորներն էլ փակուղուց դուրս գալու ղահեսային ելքը տեսնում են հենց այդ միջանկյալ եղանակի մեջ, որը, իհարկե, կարելի է կատարելագործել խորհրդարանական քննարկումների արդյունքներով:

Ինչ վերաբերում է Սահմանադրությունը Գերագույն խորհրդում քննարկելու եւ ապա հանրաքվեի դնելու առաջարկին, որ հավաքել է 138 ձայն, ապա այն առաջին հայացքից է դրական համարվել, որովհետեւ բխում է գործող Սահմանադրության 98-ղ հոդվածից, որը Սահմանադրության ընդունումը վերապահում է Գերագույն խորհրդին: Այս առաջարկը գործնականորեն անիրագործելի է, որովհետեւ նախ՝ Գերագույն խորհուրդը սահմանված կլինի քննարկել ոչ միայն Սահմանադրական հանձնաժողովի, այլ նաեւ վեցյակի, կոմունիստական կուսակցության եւ այլ նախագծեր: Եթե անգամ հրաղարակի վրա եղած մյուս տեքստերի հեղինակները չղահանջեն քննարկել նաեւ իրենց նախագծերը, ապա Գերագույն խորհրդի ծայրահեղ քաղաքականացված այս վիճակում հենց միայն երեք նախագծերի քննարկումները նրանից կդահանջեն տարիներ, մինչդեռ նրա լիազորությունների ժամկետի լրանալուն մնում է մեկ տարուց էլ ղակաս: Ու՞մ հայտնի չէ, որ Սահմանադրության մուտքի, նրա յուրաքանչյուր հոդվածի ու դրույթ[illegible]ի ու տարի համար ընթանալու են շարունակական վեճեր: Մեր կարծիքով, այս ճանապարհը եւս տանում է դեղի փակուղի, իհարկե, եթե հիշյալ նախագծերից մեկնումեկը նախնական քվեարկությամբ հիմք չընդունվի Գերագույն խորհրդի կողմից եւ հետագա քննարկումներն ու ճշգրտումները չկատարվեն միայն մեկ՝ հիմք ընդունված նախագծի վերաբերյալ: Ընդսմին, նախագծերից որեւէ մեկը հիմք ընդունելու համար եւս ղահանջվում է ղատգամավորների ընդհանուր թվի ձայների երկու երրորդը, որը, ինչղես արդեն հատոգվել ենք, հնարավոր չէ:

Այսղիսով, խորհրդարանի կազմը, նրանում քաղաքական ուժերի հարաբերակցությունը մի ավելորդ անգամ եւս աղացուցում են, որ Սահմանադրությունը հանրաքվեով, Սահմանադիր ժողովի կամ Գերագույն խորհրդի միջոցով ընդունելու եղանակներից եւ ոչ մեկը այսօր իրական չէ եւ հակադիր կողմերը, ուզած թե չուզած, ղեսք է գնան փոխզիջումների, որեւէ օրինական (կեզիտիմ) մարմնի կողմից մեկ միասնական տեքստ մշակելու, այն Գերագույն խորհրդում քննարկելու եւ ընդունելու, կամ էլ Գերագույն խորհրդում քննարկելու, հավանության արժանացնելու եւ ապա հանրաքվե նշանակելու ճանապարհով. մի ճանապարհ, որ առաջարկում ենք մենք: Ազգային գաղափարախոսությունը, ազգային համաձայնությունը, հասարակական համերաշխությունը եւ սահմանադրական-իրավական երկիր դառնալու շահը այդ են ղահանջում:

Ի դեղ, փոխզիջումների գնալու, սահմանադրությունների տեքստերում իշխանությունների հավասարակշռման կառուցակարգեր ընդունելու հարցում ընդդիմության դիրքորոշումը միանգամայն խրախուսելի է, ինչը չի կարելի ասել հակառակ կողմի մասին:

Մինչեւ վերջ անկեղծ չենք լինի, եթե չխոսենք նաեւ նման իրավիճակում Սահմանադրությունը հակասահմանադրական ուղիով, կամ ավելի ճիշտ՝ օրենքը շրջանցելու ճանապարհով ընդունելու միտումների մասին: Դա կարող է կատարվել հետեւյալ ձեւով. ՀՀ Գերագույն խորհուրդը օրենքներն ընդունում է լիազորություններ ճանաչված ղատգամավորների ձայների ղարզ մեծամասնությամբ, հետեւաբար եթե Հայաստանի Հանրաքվեության հանրաքվեի մասին օրենքում ձայների այդ քանակով, այսինքն օրինական լրացում կատարվի, որով հանրաքվե նշանակելու իրավունք վերադարձվի նաեւ հանրաքվեության նախագահին, ապա նա արդեն ազատ կլինի հրամանագրով նշանակելու հանրաքվե: Եվ այս դեղքում չի բացառվում, որ հանրաքվեի դրվի միայն Սահմանադրական հանձնաժողովի մշակած տեքստը, կամ, եթե նույնիսկ վեցյակի տեքստն էլ դրվի հանրաքվեի, ապա նաեւ չենք վերանում երկու տեքստերի միակողմանիություններ, երկրորդ՝ ընտրական հանձնաժողովների ձեւավորման եւ քվեարկությունների անցկացման գործող կարգը չփոփոխվելու դեղքում, կենտրոնական եւ տեղական իշխանություններ ամեն «ջանք» կգործադրեն, որղեսզի ընդունվի Սահմանադրական հանձնաժողովի մշակած տարբերակը: Իհարկե, այդ հանգամանքը ոչ միայն չի դադարեցնի քաղաքական դայքարը, այլեւ հեռագայում անկայուն ու խոցելի կդարձնի ընդունված Սահմանադրությունը եւ վերջին հաշվով կհանգեցնի սահմանադրական փոփոխությունների: Էլ չեմ խոսում նախագահական մենիշխանության հաստատման վտանգի մասին:

Ի մի բերելով վերը նշվածները, ղեսք է ասել, որ եւ Սահմանադրական հանձնաժողովի, եւ վեց կուսակցությունների, աշխատանքային խմբի անդամներ իսկապես իրավատու անձինք են, մասնագետներ, որոնք ի զուր են եւ իրականում ստեղծել են սահմանադրությունների որակյալ, ավարտուն նախագծեր, բայց բանի որ դրանց բովանդակությունը երկու դեղքում էլ ղայմանավորված է քաղաքական գործոններով, ուստի դրանք զերծ չեն միակողմանիություններից: Եթե վերացվեն այդ միակողմանիությունները, նախագծերից յուրաքանչյուրը կարելի է ընդունել: Ուղղակի ղեսք է հավելի առնել, որ Հայաստանի Հանրաքվեության առանձին օրենքներով արդեն իսկ ընդունվել եւ գործում է նախագահական կառավարման ձեւը, որը ղեսք է ղահանջել մեր կողմից վերեւում նշված նկատառումներով:

Բնականաբար հարց է ծագում. իսկ ինչղե՞ս անել, որ ժողովրդի դատին (հանրաքվեին) ներկայացվի ոչ թե միակողմանի, ոչ թե կողմնակալ, այլ որակյալ, բազմակարծության պայմանների վրա կառուցված, կայուն, հասարակության մեծ մասի շահերը հավելի առնող, իրավաբանորեն ճիշտ ձեւակերպված Սահմանադրություն, որի ստեղծմանը միաժամանակ մասնակցություն ունենան եւ ՀՀ նախագահը, եւ ՀՀ Գերագույն խորհուրդը, եւ քաղաքական ուժերը:

Նկատի ունենալով նաեւ սահմանադրական քննարկումների արդյունքները ու արտահայտված տեսակետների բազմերանգությունը, մենք գտնում ենք, որ ՀՀ Գերագույն խորհրդի Սահմանադրական հանձնաժողովի եւ վեցյակի սահմանադրությունների նախագծերը ղեսք է միացնել իրար, դրանցից սինթեզել մի նոր նախագիծ, ստեղծել էլ ավելի կատարյալ մի տեքստ, որն ընդունելի կլինի եթե ոչ բոլորի, ապա գոնե մեծամասնության համար: Ըստ որում, գործնականորեն կարելի է ղահղանել եւ Սահմանադիր ժողովի, եւ հանրաքվեի գաղափարները, աղահովել Սահմանադրության ընդունման հարցում Գերագույն խորհրդի գործուն մասնակցությունը, հարցը լուծել առաջ, մասնագիտական բարձր մակարդակով, առանց մեծ ծախսերի եւ առանց հանրաքվեությունն էլ ավելի քաղաքականացնելու: Դրա համար անհրաժեշտ է միայն վերջ դնել անհանդուրժողականության փիլիսոփայությանը, երկու տեքստերը միավորելու անհնարինության մասին մտացածին ղատճառաբանություններ, ինչ-ինչ նկատառումներով առանց Սահմանադրության նոր ընտրությունների գնալու միտումներին:

Առանձնակի բարդություն չի ղահանջվում երկուսթեք խոսովմանելու, որ ամբողջ վեճը, հակադրությունը ըստ էության ընթանում է այն հարցի շուրջ, թե ի՞նչ իրավունքներով ղեսք է օժտված լինի հանրաքվեության նախագահը եւ ինչ իրավունքներով՝ աղագա Ազգային ժողովը: Այդ իրավունքները հավասարակշռելու դեղքում մյուս տարաձայնությունները հեշտ լուծելի են: Ազգային համաձայնությունը ղեսք է կայանա: Սահմանադրական միասնական տարբերակի ընդունումը դրա իրավական երաշխիքն է:

Միջազգային դիրակտիկան, կյանքն ինքն է աղացուցել, որ մարդկային հասարակության մեջ փոխզիջումները, մանավանդ քաղաքական-հասարակական բնագավառում, միշտ էլ ցանկալի եւ հնարավոր են, որովհետեւ հասարակության զարգացման ընթացքում, բնական օրինաչափություններից բացի, առկա է նաեւ սուբյեկտիվ գործոնը՝ մարդկանց գիտակցությունը, բանական մտածողությունը, ստեղծված կացություններից ելք որոնելու միտումը:

Մեկ հոդվածի սահմաններում հնարավոր չէ դատողություններ անել նաեւ մեկ միասնական սահմանադրության բովանդակությանը վերաբերող հարցերով: Կատարենք միայն մեկ հարցադրում. ի՞նչ կլինի, օրինակ, եթե Սահմանադրության մեջ ամրագրվի, որ հանրաքվեության նախագահը Ազգային ժողովին է ներկայացնում վարչապետի թեմից ոչ ղակաս թեկնածուներ, իսկ Ազգային ժողովը ձայների ղարզ մեծամասնությամբ ընտրում է նրանցից մեկին եւ հանրաքվեության նախագահը հրամանագրով նշանակում է ընտրվածին: Չէ՞ որ, օրինակ, կլասիկ նախագահական կառավարման ձեւ ունեցող ԱՄՆ-ում եւս ամբողջ վարչակազմը նշանակվում է Սենատի երկու երրորդի խորհրդով եւ հավանությամբ: Անշուշտ կդատճառաբանվի, որ ԱՄՆ-ում վարչապետ չկա: Այդ դեղքում կարելի է ասել, ԱՄՆ-ում գործադիր իշխանության դեկավարը հենց ինքը նախագահն է, ինչու՞, մեր նախագահը անմիջականորեն չի ստանձնում այդ ղարտականությունը, ցանկանում է հանդես գալ եւ որդես ղետության դեկավար, եւ որդես գործադիր իշխանության դեկավար: Այնդես որ, զիջումներն անխուսափելի են:

Այժմ այն մասին, թե որն է մեր առաջարկի էությունը: Ավելի հասկանալի դառնալու համար այն շարահարենք օրինագծի տեսքով:

Հայաստանի Հանրապետության օրենքը Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մշակման եւ ընդունման կարգի մասին

Հոդվ. 1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունն ամրագրում է ղետական կառավարման նախագահական ձեւ:

Հոդվ. 2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նախագիծը մշակում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրական ժողովը:

Հոդվ. 3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրական ժողովը կազմված է 20 անդամներից եւ ՀՀ Գերագույն խորհրդում գրանցված հասարակական-քաղաքական կազմակերպությունների մենակալ ներկայացուցիչներից:

Սահմանադրական ժողովի 10 անդամ ընտրում է ՀՀ Գերագույն խորհուրդը, 10 անդամ նշանակում է ՀՀ նախագահը: Հասարակական-քաղաքական կազմակերպությունների ներկայացուցիչներին ընտրում են այդ կազմակերպությունների դեկավար մարմինները:

Հոդվ. 4. Սահմանադրական ժողովի անդամների ձայների երկու երրորդի հավանությունն արժանացած Սահմանադրության նախագիծը քննարկվում է ՀՀ Գերագույն խորհրդում:

Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի լիազորություններ ճանաչած ղատգամավորների ձայների ղարզ մեծամասնության հավանությանն արժանացած Սահմանադրության նախագծի ընդունման համար ՀՀ Գերագույն խորհրդի որոշմամբ կամ ՀՀ նախագահի հրամանագրով նշանակվում է համաժողովրդական քվեարկություն հանրաքվե:

Առաջարկվող օրինագծի ընդունումը հնարավորություն կտա ՀՀ Գերագույն խորհրդին եւ ՀՀ նախագահին եւ կուսակցություններին հավասար մասնակցություն ունենալ ՀՀ Սահմանադրության մշակման եւ ընդունման գործում. Սահմանադրական ժողովում ներգրավել չքաղաքականացված եւ իրավասու անձանց, հատկապես սահմանադրական իրավունքի որակյալ մասնագետների, որոնց թիվը հիշ չէ Հայաստանում: Այս ճանապարհով են ընդունվել Ֆրանսիայի եւ Ռուսաստանի Դաշնության սահմանադրությունները: Այնդես որ, սա արդեն տարված, փորձված ճանապարհ է:

Ինչ վերաբերում է Սահմանադրական ժողովում իշխանությունների եւ քաղաքական ուժերի հարաբերակցությանը, ապա այն կլինի իրադրատական եւ կողմերից ոչ մեկը այլեւս չի կարող դատճառաբանել իր ներկայացուցիչների (կողմնակիցների) քիչ՝ կամ շատ լինելու հանգամանքը: Հենց այդտեղ էլ կարացդվի ուժերի իրական փոխհարաբերությունը:

Սահմանադրական ժողովին հրադարակի վրա եղած սահմանադրությունների տեքստեր, փորձագիտական եզրակացություններ եւ այլ նյութեր տրամադրելը. Սահմանադրության նախագծի մշակման եւ ընդունման ժամկետ սահմանելը ՀՀ Գերագույն խորհուրդը կարող է կատարել առանձին որոշմամբ:

Սահմանադրությունը բարեկեցիկ եւ բարեկիրթ Հայրենիք ստեղծելու իրավական նախադայմանն է, ղետական, հասարակական-քաղաքական, նաեւ անձնական կյանքի հիմնական օրենքը, որ մեզ ուղեկցելու է տեւական ժամանակով: Նրա բովանդակությունը եւ ընդունման կարգը սահմանելու համար անհրաժեշտ են փոխզիջումներ: Եկեք ընդառաջ գնանք իրար հանուն ընդհանուր գործի, հանուն վեհ նղատակի:

ՏԱՐԱՌՈՏ

Տաջիկստանը Եվրամիության մտահոգության առարկա

Եվրամիության ներկայիս նախագահ Հունաստանի երեւանյան դեսպանատնից ստացված տեղեկությունների համաձայն, նախագահող երկիրը Եվրամիության անունից 1994 մայիսի 17-ին Բրյուսելում մամլո հաղորդագրություն է տարածել Տաջիկստանի իրադրության վերաբերյալ, որ նա ողջունում է ՄԱԿ-ի հաստուկ բանագնաց, դեսդան Պիրիզ Բալոնի, ինչղես նաեւ ԵԱՀԽ-ի եւ Ռուսաստանի Դաշնության ջանքերը Տաջիկստանում ազգային հաշտությանը նվիրված քաղաքական երկխոսություն սկսելու նղատակով: Եվրամիությունը հավանություն է տալիս ՄԱԿ-ի հաստուկ բանագնացի մանդատը մինչեւ 1994 թ. հուլիսի վերջը երկարաձգելու, ինչղես նաեւ Դուշանբեում ԵԱՀԽ մշտական խումբ հիմնելու որոշումը: Այս տեսանկյունից Եվրամիությունը բոլոր շահագրգիռ կողմերին կոչ է անում ՄԱԿ-ի հաստուկ բանագնացին օգնել հաջողությամբ իրագործելու հարեւան երկրներից գաղթականների հայրենադարձությունը եւ ԵԱՀԽ-ին թույլ տալ խաղալու իր դերը, խորհուրդներ տալով նոր սահմանադրության վերաբերյալ: Հաղորդագրության մեջ Եվրամիությունը Տաջիկստանի կառավարությունից եւ այդ երկրի բնակչության տարբեր խմբերի ներկայացուցիչներ համարվող քաղաքական բոլոր ուժերից դահանջում է ՄԱԿ-ի եւ ԵԱՀԽ-ի ներկայացուցիչների հետ լիովին գործակցել քաղաքական նոր կարգավորման հասնելու նղատակով, որը հիմք կդառնա լայն ու տեւական ազգային հաշտության համար:

Ձինաթափման խորհրդաժողով

ՀԻՐՈՍԻՄԱ, 24 ՄԱՅԻՍ, ԻՏԱՐ-ՏԱՍՍ ԱՐՄԵՆՊՐԵՍ: Սպառազինությունների միջազգային վերահսկման հուսալիությունը եւ զինաթափման տարածաշրջանային խնդիրները, այս թեմաներին է նվիրված զինաթափման երկրորդ միջազգային խորհրդաժողովը, որն այսօր բացվեց Ճապոնիայի Հիրոսիմա քաղաքում: Նրա աշխատանքին մասնակցում են աշխարհի 19 երկրների, ներառյալ Ռուսաստանի, 60-ից ավելի ղետական ու հասարակական գործիչներ, փորձագետներ: Ներկայացուցչական համաժողովի մասնակիցներին ողջույնի ուղերձներ են հղել Ճապոնիայի վարչապետ Ցուտոմու Հաթան եւ արտգործնախարար Կոձի Կակիձավան: Կառավարության դեկավարն ընդգծել է այն փաստի խորհրդանշությունը, որ ՄԱԿ-ի այդ խորհրդաժողովը անց է կացվում մի քաղաքում, որը կրել է միջուկային զենքի բոլոր սարսափները: Վարչապետը բարձր գնահատական է տվել զինաթափման խորհրդաժողովներին, որոնք 1989 թվականից ի վեր ամեն տարի անց են կացվում Ճապոնիայում:

Խորհրդավոր մասունքները խժռում են մարդկանց

ԼՈՆԴՈՆ, 24 ՄԱՅԻՍ, ՈՒԱՍՆԻՊ: Հարավային Անգլիայի հիվանդանոցներում հայտնաբերվել են առայժմ անհայտ հիվանդությամբ վարակված եւս երեք մարդ: Այդ հիվանդության մասունքները բառացիորեն խժռում են մարդկանց ու հյուսվածքները եւ 24 ժամում կարող են ոչնչացնել մարդու օրգանիզմը: Հիվանդությունը նախ ի հայտ է գալիս դողի, սուր ցավի, սրտխառնոցի, սաստմոսի խանգարման ախտանշաններով: Ավելի ուշ մարմնի վրա հայտնվում են փտախտի օջախներ, որոնք կայծակնային արագությամբ տարածվում են: Խորհրդավոր հիվանդության զոհերի թիվը հասել է տասի: Նրանցից 5-ը մահացել է: Որոշ հիվանդների մարմնի մասերը եւ վերջույթները անդամահատվել են: Բժիշկները ենթադրում են, թե այդ ահավոր հիվանդության դատճառը բազմաթիվ մարդկանց կոկորդում առկա անվնաս ստրեպտոկոկային մանրէների փոխակերդումներն են: Առայժմ դա միայն վարկած է: Մեծ Բրիտանիայում մանրէակենսաբանների մի հատուկ խումբ ուսումնասիրում է առեղծվածային մանրէները:

digitised by A.R.A.R.@

ԱՀԳ

Մշակույթ

Շատերի համար դեռևս անմարսելի այս արվեստը համաբխարհային ավանգարդի ամենաառդիական շարքերում է: Այն ամբողջ աշխարհում ուղղությունների ու խմբերի առումով բավական խայտաճամուկ ու բազմաստր է եւ լայնածավալ ու ազդեցիկ մանավանդ երիտասարդների շրջանում: Հայ նկարիչները սիրում են ընդգծել, որ դրսի ավանգարդի նման հոսանքների հետ իրենք չափազանց քիչ ընդհանրություններ ունեն (չնայած հաճախ են դիմում այնպիսի հեղինակությունների, ինչպիսին Բոյսն է, Բեյնը, Դյուշանը... վերջին ցուցահանդեսի համար Էնդի Ուորհոլը): Ավելին, արվեստաբան Նազարեթ Կարոյանը տղաների առաջը բերորեն է իմֆնաստեղծ նոր անվանումով «համաստեղծական արվեստ»: Իսկ այն, ինչ ներկայացնում է «3-րդ հարկի» վերջին ցուցահանդեսը, Արման Գրիգորյանը բնորոշեց ոչ այնքան նոր «հրատարակ արվեստ» անունով: Խոսելով աշխարհում դրդող արվեստի ունեցած նոր բաժի մասին, «Art in America» («Արվեստն Ամերիկայում») ամսագիրը գրում է, որ այս նկարիչների գործունեությունը մի այնպիսի նոր շարժման ուղղություն է ի հայտ բերում, որի համեմատ անցյալի բոլոր գեղագիտական հեղափոխությունները մանկական խաղեր են թվում:

Շրջանակների ու ցանկացած սահմանափակում մերժող արվեստը այս ցուցահանդեսում միաձեռ չէ: Այստեղ, եթե որոշ հեղինակներ ապաստարկում են զուտ տեսողական կամ գեղագիտական, ոմանք սոսկ զգայական ընկալում, արդա ծրագրեր միայն դրանով չեն բավարարվում գրեթե այստեղ իմ ստեղծածը դրսի կարող եք տեսնել իմ գաղափարների միջով միայն: Ամենաառդիական ոճով է ներկայացել Վարուժան Վարդանյանը «Ռեգի» եւ «Ֆորմուլա 1» կտավներով: Թվային եւ տարային ձեւավորումներն այստեղ երբեմն խորհրդանշական, երբեմն էլ հակառակը իմաստային նշանակություն ունեն: Գրիգոր Խաչատրյանի համար դրանք ոչ այնքան տեսողական, որքան իմաստային են: Այստեղ «Գրիգոր Լուսավորիչ, Գրիգոր Նարեկացի, Գրիգոր Խաչատրյան, երրորդ ուժի բացատրման օրենքի համաձայն ես ավելորդ եմ» կամ «Մուտքը ներսի կողմից», «Ճնմարտությունը ճնմարտությունից» եւ կամ «Դրանք գտնվում են Գրիգոր Խաչատրյանի սեռական ճառագայթման դրսում...» եւ այլն:

Զուտ տեսողական խնդիր է առաջադրում Արման Գրիգորյանն իր ինստալացիաներում: «Ընտրել եմ այնպիսի տառատեսակ, որը տեսողական ուժեղ տպավորություն է առաջացնում: Կարեւոր չէ, որ այն լատինատառ է կամ բառերը չեն հասկացվում եւ կամ որ երբեմն կիսատ են մնում: Գրեթե այնպես, ինչպես լոգունգներն են տեսնում կամ անծանոթ լեզվով երգ լսում: Մոտիվը որսո՞ւմ են, չէ՞», ասում է Արմանը, սա հակաընտրախաղային (հակաէլիտար), ժողովրդային արվեստ է, որը գործ ունի այսօրվա խնդիրների հետ: Համատարած վերարժեւորման այս երջանիկ եւ մի քանի անգամ էլ դեռ ոչիսի լինենք, դրա համար ենք ապրում, եւ ոչ ոք չգիտի, թե ինչու է նկարիչը ամեն օր նկարում. 1974, 1979 երեխաներիս ծննդյան թվերն են» եւ այլն: Առարս Մարգսյանի բազմաթիվ նկարներ ներառնող «դասկերասարահը» դրված է ուղիղ հատակին իբրեւ դեռևս անավարտ գործ եւ ունի հսկայական վերնագիր, մոտավորապես այսպիսին. «Կիսամաքրված լիմոնով, մուգ գինով, կիսալցված բաժակով, կարմիր խնձորով, նավաթեկության տեսարանով, կենդանի եւ ասված դեղձանիկնե-

3-րդ հարկը պարզում է իր առագաստը

ՌՈՒԶԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Մայիսի 14-ից Նկարչի տանը «3-րդ հարկը» ներկայացրեց իր ցուցահանդեսը, որը խմբի գաղափարական «մարտկոցներից» մեկի՝ նկարիչ Արման Գրիգորյանի կամրով ստացել է «Պագիֆիկ» անունը: Նա նաեւ ցուցադրանքի (Մոդոգիլիանի) հեղինակն է: Դրա կատարման սկզբունքը դրսս մոդեռնիստական է՝ սիմետրիկ տեղադրման տարերով եւ այդպես Նոյն հոգեղությամբ նա վերաձեռակերտել է նկարիչ Վարուժան Վարդանյանի չափածոյից մի հատված. «Երրորդ հարկն օվկիանոս է, որ նավաթեկրալ նկարիչներն առագաստներ են դարզում»:



Ռուբեն Արեւշատյան. «Զարմ գործիք»

Մեր նոպատակը հումանիզմն է»: Ռուբեն Արեւշատյանի ներկայացրած երաժշտական գործիքը խլացված մեկ լարով, ոչ թե ձայն հանելու, այլ ձայն ընկալելու համար է, եւ սեղծագործության բաղկացուցիչ մասն է կազմում այն խոլ հնչյունների դասկերը, որ կարող է կլանել գործիքը: Արամյան Նարինեի «Հոս» ինստալացիան, որ թվերի, օձանկիլների շերտի կառուցիկ հանրահավաք է, սկզբնական շրջանում հոս էր արձակում: Արաս Ներկարարյանի սոլիտակոն վառոնոն դանկերի ջերմ համբույրի երկնկարի տակ ստորագրված է՝ Սիրիր մերձավորիդ: Մեր Ազատյանի «Ներմակ բարձի չորս երեսները» դոլլարի բառագույն նշանն ունեն:

Ալոս Բայանդուրի կտավները, որոնք բերեւս ոչ դասահարար հայտնվել են ուղիղ Վարդանյանի կտավների «աչքի առաջ», ամբողջովին գտված են իր ոճին հատուկ ֆակտուրայից եւ մակնշգրված են մեծ-մեծ գունավոր տառերով՝ վերից վար. «Բոլորս մի քանի անգամ եղել ենք երջանիկ եւ մի քանի անգամ էլ դեռ ոչիսի լինենք, դրա համար ենք ապրում, եւ ոչ ոք չգիտի, թե ինչու է նկարիչը ամեն օր նկարում. 1974, 1979 երեխաներիս ծննդյան թվերն են» եւ այլն: Արաս Մարգսյանի բազմաթիվ նկարներ ներառնող «դասկերասարահը» դրված է ուղիղ հատակին իբրեւ դեռևս անավարտ գործ եւ ունի հսկայական վերնագիր, մոտավորապես այսպիսին. «Կիսամաքրված լիմոնով, մուգ գինով, կիսալցված բաժակով, կարմիր խնձորով, նավաթեկության տեսարանով, կենդանի եւ ասված դեղձանիկնե-

ՀԱՍԱՅԼՔ

Հայաստանի մշակույթի օրեր Սավրոպոլում.

Մայիսի 14-21-ը Սավրոպոլում տեղի են ունեցել Հայաստանի մշակույթի օրեր: Միջոցառմանը մասնակցելու համար Սավրոպոլ էին մեկնել 100-ից ավելի մշակույթի գործիչներ: Միջոցառման նախաձեռնողներն էին Հայաստանի մշակույթի հիմնադրամը, «ԻՄԱԿ» հայ-իտալական համատեղ ձեռնարկությունը եւ Սավրոպոլի երկրամասային վարչակազմը: Ինչ-ինչ բեռների տարերի (ինչպես հայազգի, այնպես էլ այլազգի) գործողությունների դասնարով բազմաթիվ լարվածության միտումներն են եղել: Իրադրությունը մեծապես գնվում է Սավրոպոլի երկրամասի եւ ՀՀ ԱԳՆ ուղղության կենտրոնում: Այս միջոցառումը կոչված էր ցույց տալու ՀՀ ռուսալեզու արվեստագետների նվաճումները: Միջոցառմանը մասնակցել են Հայաստանի ռուսական գնչուական երաժշտության անսամբլը, Սանինալավսկու անվան ռուսական դրամատիկական թատրոնը: Սավրոպոլի վարչակազմը առաջարկել է Հայաստանում այս տարվա աշնանը անցկացնել Սավրոպոլի մշակույթի օրեր: ՆՏ

ՆՈՐԱՁԵՎՈՒԹՅՈՒՆ

Փոխադարձ կցահարում

Վերջերս կրկին մի սկանդալ դարձավ նորաձեւության բիզնեսի անհանգիստ ու արկածային աշխարհում: Ամերիկացի սթիլիստ Ռալֆ Լորենը մեղադրվեց եւ դատապարտվեց Իվ Սեն Լորանի ստեղծած մի զգեստ-ամոթինգի դասնարման համար: Զգեստը, որ աշխարհ էր եկել 1970 թ. եւ վերամշակվել ու «վերահրատարակվել» Սեն Լորանի 1992-93 թթ. աշուն-ձմեռ հավաքածուում, հայտնվել է Ռ. Լորենի Փարիզում գտնվող ծախսափնյա խանութ-սրահում, նրա անվան դիտակով: Փարիզի առեւտրային դատարանը ճանաչել է խաբեությունը, եւ Ռալֆ Լորենը դեսք է Իվ Սեն Լորանի ֆիրմային վճարի 2.2 միլիոն ֆրանկ: Սակայն դատմության ամենահետաքրքրական մասն այն է, որ Պիեռ Բերժեն, Ի. Ս. Լորեն ֆիրմայի դատարանը, իր հերթին դեսք է 500000 ֆրանկի փոխհատուցում անի Ռալֆ Լորենին՝ վերջինիս սարքի գնահատման չափազանց խստության համար. ամերիկյան «Women World Daily» նորաձեւության օրաթերթում նա կատարվածը բնութագրել է որպես գողություն: Ն. Ղ.

ՄՈՍԿՎԱ

Լազարյան ճեմարանը 2001 թ. կտա առաջին շրջանավարտները

ՄԱՌՎԵԼ ՄԻԿՈՅԱՆ

Մայիսի 24-ին հյուրախաղերով Վանաձոր էին ժամանել Մոսկվայի «Իմպերիալ» ֆիրմայի երաժշտական համույթները: «Ռուսաստանյան գնչուներ» համույթը, հրեական «Տում բալալայկա» տուն բատրոնը եւ միջազգային մրցույթների դափնեկիր Լազարյան համույթը: Նրանք ելույթ ունեցան Բաղդի մշակույթի կենտրոնի դահլիճում: Ինչպես հարցազրույցի ժամանակ ասաց «Իմպերիալ» ֆիրմայի նախագահ Արկադի Վարդանյանը, ֆիրման Մոսկվայում զբաղվում է հիմնականում [illegible]ական հուշարձանների վերականգնմամբ: Ֆիրման հովանավորում է նաեւ մշակութային տարբեր միջոցառումներ եւ մշակույթի առանձին գործիչներ: Ա. Վարդանյանը մասնավորապես նշեց, որ արդեն համաձայնություն է հասել բերվել Մոսկվայի Բաղրամյանի անվան վերաբացելու Լազարյան ճեմարանը Բաղդի կենտրոնում վերականգնված շենքերից մեկում: Ըստ նրա, 2001 թ. Հայաստանում հրատարակության ընդունման 1700-ամյակի առթիվ ճեմարանը կտա իր առաջին շրջանավարտները:

ՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Վաճառվում է
«INFOTEC 6500» մակնիշի գերմանական ֆաքս,
«OPEL REKORD HONDA PRELUD» եւ
«MERSEDES JEEP» մեքենաների որոշ պահեստամասեր:
Զանգահարել 25-55-92 հեռախոսահամարով

ԻՏԱԼԻԱ

Գլուխգործոցների որսը

Արվեստի դատաբան Ջորջո դե Մարկեսը, գլխավորելով հնէաբանների եւ արվեստաբանների մի խումբ, սկսեց հսկայական աշխատանք, որը նախատեսում էր Իտալիայի սեփականություն հանդիսացող արվեստի ստեղծագործությունների ցուցակագրումը: Այժմ աշխատանքը հիմնականում տարվում է փաստաթղթերի, ակտերի հետ: Հատկապես դրանք են դատկերացում տալիս դեռեւոյան անգին հսկայական հարստության մասին:

Հանձնաժողովի գլխավոր խնդիրն է՝ կազմել իտալական արվեստի ստեղծագործությունների հասցեագրացուցակը: Իսկ երկրից անհետացած գլուխգործոցներն՝ գեղարվեստական կտավների, անտիկ քանդակների որոնումով կզբաղվեն քննիչները: Շաղասելով հանձնաժողովի աշխատանքի ավարտին, խուզարկուներն արդեն անցել են գործի: Եվ ահա սկզբի «գյուտը» Ռաֆայելի «Տիրամայրը գառնուկով» կտավն է, որ նկարիչն ստեղծել է 1506 թվականին: Մինչեւ վերջին ժամանակ նրա նկարը գտնվում էր կասալոգներում: Երբեւ նա դատկանում էր Լեոդարդի ընտանիքին: 19-րդ դարի վերջից «Տիրամայրը» խորհրդավոր կերդով հայտնվեց մեկ Ավստրիայում, մեկ Գերմանիայում, մեկ Շվեյցարիայում: Տեղեկանալով, որ կտավը վաճառվում է, խուզարկուները, շվեյցարական եւ իտալական միջնորդներին ներկայացան գնորդների դերում: Նրանք Միլանի խոշոր բանկերից մեկին համոզեցին մասնակցել գործողությանը եւ գլուխգործոցի անանուն «սեփականատիրոջը» տալ ֆինանսական անհրաժեշտ երաշխիքներ: Իսկ միջնորդներին՝ կոնտրակտն ստորագրել անմիջապես դրա[illegible]ատանը եւ այնտեղ էլ ստանալ դրամը: Կտավը վաղորդ դեռ է փոխադրեին Շվեյցարիա եւ բանկային բանկային չհրկիզվող դահարանում:

Օդերացիան անցավ հիանալի: Միջնորդները փորձված խողովակներով նկարը անլեզալ ձեւով փոխադրեցին Իտալիա: Դատարանը նրա համար բացեց ստորգետնյա զրահապատ մի դահարան, իսկ միջնորդների համար՝ մի շքեղ դահլիճ, որտեղ նրանք դահի ստորագրեին — 25 միլիոն դոլլարանոց գործարքը: Եվ միայն վերջին դահին «գնորդներից» մեկը կանգնեց եւ հանգիստ բացականչեց. «Թույլ տվեք, ներկայանալ. կարաբինիերների կառիտան Պաոլո Ռոսա»: Բաբքուկ ի հարկե, կլինի այս գործի ուղղ: Չէ՞ որ հայրիր տարի է անցել այն դահից, երբ «Տիրամայրը գառնուկով» կտավը անօրինական, գաղտնի կերդով արտահանվել էր Իտալիայից: Բոլոր դեդերում Իտալիան սթիդված կլինի նրան երկիր վերադարձնելու համար վճարել: Միգուցե ոչ թե 25 միլիոն դոլլար, այլ զգալիորեն դիչ:

ԵՐԵՎԱՆ-ՍԵՐՎԻՍ

«Երեւան-սերվիս» ձեռնարկությունը հրավիրում է ուղիղ չվերթի՝ մաքսելի գներով

ԵՐԵՎԱՆ-ԱՄՄԱՆ (Հորդանան)

Առաջին թռիչքը կկայանա հունիսի 18-ին:
Ինքնաթիռը 7 օր տրանսլյուց հետո կվերադարձնի գրոսաշրջիկներին Երեւան:
Կարող եք դիմել Երեւան, Տիգրան Մեծի 16
Հեռախոսներ 52-45-12, 52-99-48

A STYLE

digitised by A.R.A.R.@

ՇԱԽՄԱՏ

Երբ գրոսմայստերի ձեռքը կդավ նավակին...

ԳԱԳԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
հատուկ «Ազգի» համար,
Լոս Անջելես

Եվ այսպես մեկնարկեց Ամերիկայի Միացյալ Նահանգների եւ Հայաստանի շախմատային հավաքականների մրցախաղը: Առաջին տուրից մեկ ժամ առաջ Գլենդելի «Սիլվենս» սրահում կայացավ մենամարտի հանդիսավոր բացման արարողությունը: Երեկոն վարում էր հայ գաղութի հանրածանոթ գործիչ Օշին Քեչիշյանը: ԱՄՆ-ի եւ Հայաստանի պետական հիմնների կատարումից հետո լեփ-լեցուն դահլիճին հայրական ողջույնով դիմեց արբազան Վազգեն Հովսեփյանը: ԱՄՆ-ի հավաքականից ելույթ ունեցավ գրոսմայստեր Ալեխ Երմոլինսկին: Հայաստանի պատվիրակության կողմից խոսք ասելու պատիվ ունեցավ տղերիս հեղինակը: Առջև գլխավոր մրցավար, միջազգային կարգի մրցավար Ռենդի Հոֆը ներկայացրեց խաղակարգը եւ անցկացրեց վիճակահանություն, համաձայն որի անդրանիկ տուրում առաջին եւ մյուս կենտ խաղատախտակների վրա սպիտակներով պետք է խաղային ամերիկացիները:

Առաջինն ավարտվեց Գրիգորի Կայդանովի եւ Ռաֆայել Վահանյանի հանդիպումը: Հայ գրոսմայստերը սեւերով վստահորեն հավասարեցրեց դիրքը, եւ մրցակիցները հաշտություն կնքեցին: Վլադիմիր Հակոբյանը փոքր դիրքային առավելություն ուներ Ալեխ Երմոլինսկու դեմ, բայց դա բավարար չէր հաղթանակի ձգտելու համար: Շաս սուր պայքարում ընթացավ Աշոտ Անասասյանի եւ Իլյա Գուրեւիչի խաղը: Մի պահ թվում էր, թե մեր գրոսմայստերը հաջողության հնարավորություններ ունի, բայց այստեղ եւս ամեն ինչ ավարտվեց ոչ-ոքիով:

Մյուս երկու պարտիաները տխրեցրին դահլիճում հավաքված հարյուրավոր մեր հայրենակիցներին: Դեռ մեկնարկից առաջ ստացված այն տպավորությունը, որը հայ գրոսմայստերները հուզվում են, ցավոք, հաստատվեց: Սմբատ Լպուտյանը իրեն ոչ հատուկ պասիվությամբ անցկացրեց հանդիպումը Բորիս Գուլկոյի հետ, որից նրա ահեղ մրցակիցը օգտվեց առավելագույն չափով եւ կենտրոնում ծավալված գրոհով հաստատ հաղթանակի:

Արտաշես Մինասյանի եւ Պատրիկ Վոլֆի պարտիայի մասին խոսելուց առաջ անհրաժեշտ է տեղեկացնել, թե ինչ ժամակարգով են անցկացվում առաջին երկու տուրը (վերջին երկուսի մասին կխոսենք մեկ այլ անգամ): Մրցակիցներին 40 քայլի համար տրվում է 2-ական ժամ, որից հետո եւս մեկական ժամ մնացած ամբողջ պարտիայի համար: Եվ ահա, Մինասյանը ժամանակի առաջին սուղումից հետո որակ էր կորցրել, բայց համառ պաշտպանությամբ հասավ ոչ-ոքիի դիրքի: Մեկ այլ ժամանակակարգի դեպքում Վոլֆը կհաշվեր խաղաղ արդյունքի հետ, բայց այժմ որոշեց շարունակել պայքարը, քանի որ հայ գրոսմայստերը շատ քիչ ժամանակ ուներ: Մինասյանը կայծակնային խաղով գործնականում լուծեց նաեւ այդ խնդիրը, սակայն այն պահին, երբ Վոլֆի ժամացույցի սլաքը հասավ Մինասյանին, Արտաշեսի նյարդերը չդիմացան: Նա ձեռքով դիպչավ նավակին, նույն վայրկյանին նկատեց, որ կողքից սխալ է թույլ տալիս եւ մատ ստանում, բայց շախմատային դաժան օրենքով («ձեռք էս տվել խաղ արա»), ստիպված եղավ անձնատուր լինել: Այս ցավալի պարտությունից հետո ամերիկացիներն առաջ անցան 3.5-1.5 հաշվով:

Դե ինչ, հույս ունենք, որ վաղվա օրն ավելի հաջողակ կլինի:

ՍՊՈՐՏ

Նստացույց «Հրազդան» մարզադաշտում

Հայաստանի Հանրապետության ոչ լրիվ 2,5 ֆուտբոլային անկախ մրցաշրջանի ընթացքում տարօրինակ շատ բաներ ականատես եղանք՝ հաշվեհարդարներ, ծեծկռտուքներ, լկտի հայհոյանքներ, խայտառակ մրցավարություններ, առուծախ եւ այլն: Սակայն այս անգամ դեղքն ավելի արտառոց է: «Կանաչ»-«Շիրակ» հանդիպման ավարտին մնում էր ընդհամենը հինգ րոպե, երբ ՖԻՖԱ-ի մրցավար Հենրիկ Սահարոյանը 11 մետրանոց հարված նշանակեց «Կանաչի» դարպասի դիմաց: Շատերս հարցնում էինք՝ ինչպես է հնարավոր, որ մրցավարը նման սխալ գնահատեց դեպքը: Ինչպես հայտնի դարձավ հետո, Սահարոյանը ինքնաթիռով Երեւան թռչելիս ինքնաթիռի հրամանատարի հետ ունեցել է զրույց, որի ընթացքում նրան հայտնել է, թե «Շիրակը» ինչպիսի դիրքերի է հասել: Ինչպես հայտնի դարձավ հետո, Սահարոյանը ինքնաթիռ նստելիս ինքնաթիռի հրամանատարի հետ ունեցել է զրույց, որի ընթացքում նրան հայտնել է, թե «Շիրակը» ինչպիսի դիրքերի է հասել:

Անցյալ տարվա գաստերը շատ մոռացվեցին

կեց «Կանաչի» դարպասին, եւ «Շիրակը» 2-1 հաշվով կարեւոր հաղթանակ տարավ: Ըստ հանդիպման տեսուչ Սուրեն Մելքոնյանի զեկուցագրի, մրցավարն անհիմն կերպով է նշանակել 11 մետրանոցը, որն ազդել է հանդիպման ելքին: Բնականաբար տեսուչը ՖԻՖԱ-ի մրցավարին գնահատել է «անբավարար»: Ընդհանրապես ՖԻՖԱ-ի մրցավար արտահայտությունը շատ տարօրինակ է հնչում մեր հիմնականում ցածր մակարդակի մրցավարների հասցեին: Խորհրդային 70 տարվա ընթացքում Հայաստանը ՖԻՖԱ-ի ոչ մի մրցավար չի ունեցել, իսկ հիմա սկսի պես ածել են: Եւ ահա վերոհիշյալ խաղից հետո ի նշան անարդարացի մրցավարության «Կանաչի» ֆուտբոլիստները «Հրազդան» մարզադաշտում մինչեւ գիշերվա ժամը 12-ը նստացույց են արել: Միաժամանակ «Կանաչի» մարզիչը մեկ «մուտքի» է հասցրել մրցավարին:

Տուրի ամենակենտրոնականը Աբովյանում տեղի ունեցած «Կոտայք»-ՀՄՄ ՖԻՄՍ հանդիպումն էր: Երկու թիմերն էլ իրենց հասուն խաղով հաճելիորեն զարմացնում են ֆուտբոլասերներին եւ: Սկզբունքային այս մրցավեճն ավարտվեց ոչ-ոքի՝ 1-1: Սկզբից հաջողության հասան հյուրերը: Գոլի հեղինակ դարձավ Արմեն Պետիկյանը: Երկու րոպե չանցած Սամվել Առաքելյանին հաջողվեց վերականգնել հավասարակշռությունը: Մայիսի 28-ին «Հրազդան» մարզադաշտում տեղի է ունենալու Հայաստանի ֆուտբոլային մրցաշրջանի ամենակենտրոնական հանդիպումը՝ գավաթի երրորդ խաղարկության եզրափակիչը: Անցյալ տարվա պես պատվավոր ավարտ վիճարկելու են Երեւանի «Արարատը» եւ Գյումրիի «Շիրակը»: Սպասվում է հետաքրքիր եւ դիտարժան մրցավեճ:

ԼՈՒԲԵՐԻ ՀՈՍՔ

Բասկետբոլի եվրոպական գերտերությունները

1993-94 թթ. մրցաշրջանում եվրոպական պատշոնական մրցաշարերի արդյունքներով, բասկետբոլի միջազգային ֆեդերացիան (ՖԻԲԱ) հրապարակել է եվրոպայի 10 լավագույն բասկետբոլային երկրների ցուցակը.

1. Հունաստան 352 միավոր
2. Իսպանիա 340
3. Իտալիա 203
4. Ֆրանսիա 103,7
5. Թուրքիա 73
6. Սլովենիա 72,5
7. Խորվաթիա 70
8. Իսրայել 48
9. Գերմանիա 45
10. Բելգիա 37

Կոմանեչին կրկին առաջինը

Ավստրալիայի Բրիզբան քաղաքում տեղի ունեցած մարմնամարզության աշխարհի առաջնությունում ամենամեծ ուշադրությունն իր վրա գրավեց օլիմպիական խաղերի չգերազանցված չեմպիոնուհի (1976 թ.) ռումինուհի Նադյա Կոմանեչին: Նա փորձել մարզասերներին բազմահազար ինքնագրեր տվեց:

21-րդ դարի Ջորդանը

Ըստ ամերիկյան մասնագետների, 18-ամյա Ֆելիցիա Լոդեսը, որի հասակն է 198 սմ, կդառնա 21 դարի «Նոր Ջորդանը»:

ԱՍԼ-94

Ներկայացնում ենք «Աշխարհի գավաթ-94»-ի մասնակիցներին

Բեբետոն Բրազիլիայի թագավոր

ԳՐԻԳՈՐ ԱՄԻՐՋԱՆՅԱՆ
Վալանս, Ֆրանսիա

Նրա անունն է Խոսե Ռոբերտո Կամա: Բայց ինչպես բրազիլացի ամեն մի խաղացող, նա էլ կրում է «Բեբետո» մականունը: Բեբետոն, որն ամուսնացել է ուելսցի մի նախկին չեմպիոնուհու հետ եւ երկու երեխաների հայր է, շատ բրազիլացիների պես, մեծ հավատացյալ է: Խաղերից առաջ, նա առանձնանում է որեւէ եկեղեցում կամ մատուռում, որ կարողանա աղոթել հաջողությունների համար: Բեբետոն Ռիո դե Ժանեյրոյի հարուստ թաղամասերից մեկում ունի անձնական մի մեծ վիլլա: Նա հիմա հանդես է գալիս Իսպանիայի Լա Կորուն՝յայի «Դեպորտիվո» թիմում, որը երկար ժամանակ գլխավորում էր Իսպանիայի առաջնության մրցաշարային աղյուսակը եւ միայն վերջին տուրում, չեմպիոնի կոչումը զիջեց «Բարսելոնին»: Բեբետոն փետրվարի 16-ին տոնեց իր 30 ամյակը: «Ռադիո Գլոբոյի» բրազիլացի հայցնի մեկնաբաններից մեկն ասում է. «Սելեչաոն (Բրազիլիայի հավաքականի մարզիչը) բախտավոր է, որ իր թիմում ունի Ռոմարիոյի եւ Բեբետոյի պես խաղացողներ: Բայց Բեբետոն ավելի բազմակողմանի խաղացողի հատկություններ ունի, քան Ռոմարիոն: Բեբետոյի խաղը նվազ երեւացող է, բայց նա ավելի օգտակար է: Առանց Բեբետոյի Բրազիլիան Բրազիլիա չի լինի»: Իսկ Բրազիլիայի հավաքականի ղեկավար Կառլոս Ալբերտո Պարեյրան, որն ուզում է 24 տարվա ընդմիջումից հետո (1970 թ.) իր երկրին նվիրել աշխարհի չեմպիոնի տիտղոսը, ասում է. «Բեբետոյի գնդակի հետ վարվելն աշխարհում եզակի է: Նրա շարժումները գեղեցիկ են, հարվածների ուժը բացառիկ: Այս ֆենոմենալ խաղացողը ունի ուրիշ կարեւոր հատկություն եւս: Նա մեծ ազգասեր է եւ ինքն է մեր հավաքականի կառուցող ուժը»: 1981 թ. հունիսին նա ընդգրկվում է Ռիո դե Ժանեյրոյի «Ֆլամենգո» առասպելական թիմ: Այդ ժամանակ Բեբետոն ընդամենը 17 տարեկան էր: Երբեք բրազիլական որեւէ թիմ այդ տարիքի ֆուտբոլիստի համար մեծ գումար չէր ծախսել: Նրա հասակն էր 161 սմ, քաշը 53 կգ: Բժիշկ Ֆրակալային հանձն առավ աշխատել Բեբետոյի հետ, ինչպես նախկինում արել է Զիկոյի հետ: Երեք տարվա աշխատանքից հետո Բեբետոյի հասակը հասավ 176 սմ., իսկ քաշը 64 կգ: 1983-ին, 19 տարեկանում Բեբետոն հագնում է Բրազիլիայի երիտասարդական հավաքականի համազգեստը եւ Մեխիկայում դառնում աշխարհի չեմպիոն: «Մինչեւ հիմա այս նվաճումն ինձ համար մնում է ամենաթանկը», հայտարարում է Բեբետոն, որն արդեն 80 անգամ հանդես է եկել Բրազիլիայի ազգային հավաքականում: Բեբետոյի առաջին քայլերը Բրազիլիայի գլխավոր հավաքականում, 1985-ին շատ հաջող չէին: Նա պետք է փոխարիներ Զիկոյին: Սակայն խաղից խաղ նա վերելք ապրեց: 1988-ին Բեբետոն ընդգրկվում է «Ֆլամենգոյի» ղեկավարների հետ եւ 2 մլն. դոլլարի դիմաց տեղափոխվում «Վասկո դե Գամա»: Դա Բրազիլիայում ամենաթանկ արժեքն էր մինչ այդ: Բայց եվրոպան ավելի շատ է վճարում: Խոսակցություններ են գնում նրա «Բավարիա», «Շտուտգարտ» կամ «Մարսել» տեղափոխվելու մասին: Նա որոշում է պայմանագիր կնքել Լա Կորունյայի թիմի հետ: Ինչու Բեբետոն նախընտրեց այս թիմը: «Ես պետք է ապրեմ ծովի եզերքին, արեւի տակ: Այստեղ ուրախ ժողովուրդ են եւ նրանց սովորությունները շատ մոտ են բրազիլական կյանքին», հայտարարում է Բեբետոն, որը մոտ ժամանակներս երրորդ զավակի հայրը կդառնա: Անցյալ տարի Բեբետոն դարձավ Իսպանիայի առաջնության գլխավոր ռմբարկու: Այս տարի առաջինն իր ընկերն է՝ Ռոմարիոն: «Վնաս չունի, թող Ռոմարիոն լավագույն ռմբարկու լինի, իսկ մենք Իսպանիայի չեմպիոն» ասում էր Բեբետոն, սակայն, ինչպես հայտնի է, երկու դեպքում էլ բախտը ժպտաց ընկերոջը: Ուզո՞ւմ է Բեբետոն մի ուրիշ եվրոպական թիմում խաղալ: «Ոչ, պատասխանում է Բեբետոն եւ ավելացնում, 1995-ին Բրազիլիա պետք է վերադառնամ, եւ եթե հնարավոր լինի, կխաղամ «Վասկո դե Գամա» թիմում, որը մնում է սրտիս մեջ»: Երկու տարվա ընթացքում Բեբետոն Լա Կորունյայի «Դեպորտիվոն» դարձրեց Իսպանիայի բարձրակարգ թիմերից մեկը: Ներկայումս նա համարվում է աշխարհի երրորդ կամ չորրորդ ամենամեծ ռմբարկուն: Բրազիլացիները նրան համարում են առաջինը, բրազիլացիներ, որ Բեբետոյի մասին հորինել են մի երգ եւ հազարավոր ձայներ այս երգն են երգում Բրազիլիայի հավաքականի խաղերի ժամանակ: Երգի առաջին նախադասությունն է. «Ei, ei, ei, Bebeto e'nosso rei», որը նշանակում է. «Այո, այո, այո, Բեբետոն մեր թագավորն է»: Իսկ Բրազիլիան կկարողանա՞ նոր գահի արժանացնել իր թագավորին:

Բաժինը վարում է
ՍՈՒՐԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԸ

Միջազգային կրթական ծրագրերի շրջանակում ամռան ընթացքում ընտրության սկզբունքով կազմվում են 13-17 տարեկան երեխաների խմբեր՝ անգլերենի առաջադիմած ուսումնասիրության համար հենց Անգլիայում:

Ամռանը մեկ ամիս Լոնդոնի կենտրոնի լավագույն դպրոցներից մեկում, ուր ստեղծված են լեզվի արդյունավետ յուրացման եւ ակտիվ հանգստի հրաշալի պայմաններ, հայ երեխաները կապրեն իրենց մանկության աստղային ժամանակը:

Սիրելի բարեկամներ, Սերտիֆիկատ ծրագրերի եւ անկախ կրթության միավորումը (Մոսկվա) եւ «Դավիթ Անհաղթ» գիտահումանիտար կենտրոնը (Երեւան) առաջարկում են ձեզ իրենց ծառայությունները Անգլիա մեկնելու, ուսումնասիրությունը կազմակերպելու գործում: Մի կորցրեք ձեզ տրված հնարավորությունը ձեզ սպասում է հրապուրիչ ճամփորդություն, ձեր երեխաները Լոնդոնից կվերադառնան ոգ միայն կազդուրված ու բարմացած, այլեւ անգրաքանչ կատարյալ դպրոցով:

ՎԵՐԱԳԱՐՅԵՔ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ԻՐԵՆՑ ՄՈՆԿՈՒՈՅՑՈՒ ԵՐԿԻՆՔԸ ԱՅՍ ՕՏՆԵՐԱԳՈՒՅՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ: ԵԼՆՈՒ ՎԱՌՈՒՅՑՈՒ, ԴԻՄԵՑԵՔ ՄԵՀ:

Մեր հասցեն՝ Երեւան, Թումանյան փ. 17, 1-ին հարկ. 4-րդ սենյակ. հեռ. 521-481: Մեզ ձեզ սպասում ենք աշխատանային օրերին ժ. 11-ից մինչեւ 16-ը:

digitised by A.R.A.R@

ԱԶԳ

Օրվա հետքերով

ԵՐԵՎԱՆ

Տրանսպորտի մշտական տոմսերի նոր գներ

Ներքաղաքային տրանսպորտով ուղևորների փոխադրման սակագների փոփոխման հետ կապված փոխվել են նաև երթևեկության միասնական միամսյա մշտական տոմսերի գները: Ինչպես տեղեկացանք տրանսպորտի նախարարության լրատվական ծառայությունից, հունիսի 1-ից ավտոբուսներով երթևեկելու համար մշտական տոմսի արժեքը 900 դրամ է լինելու, չափահաս կենսաթոշակառուների համար՝ 450 դրամ, ուսանողների եւ սովորողների համար՝ 400 դրամ, ծեռնարկությունների եւ կազմակերպությունների համար՝ 1350 դրամ: Նախարարության կոլեգիան նոր գները սահմանելիս առաջնորդվել է նորմատիվային արժեքներով, սակայն միաժամանակ հաշվի է առնվել բնակչության սոցիալական ծանր վիճակը եւ ներքաղաքային տրանսպորտից օգտվելու համար խաղաքաղաքացիների կողմից նախօրոք վճարման հարցում ցահագրգռվածության բարձրացումը:

Տրամվայի եւ տրոլեյբուսի մշտականը կարժենա 520 դրամ, չափահաս կենսաթոշակառուների համար՝ 260, ուսանողների եւ սովորողների համար՝ 180, ծեռնարկությունների համար՝ 780 դրամ: Մետրոյի մշտականը համապատասխանաբար կարժենա 240, 120, 85 եւ 360 դրամ: Միաժամանակ կոլեգիան որոշել է երկկողմանի ծանոթագրություն ուսանողներին հասկացնել անվճար տոմսեր, ծախսերը փոխհատուցելով տվյալ տրանսպորտային ծեռնարկության շահույթի հաշվին:

Ա. Ռ.

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆՑԻՆԵՐԻ

Ազգակ գյուղում «Ուծիվ Վասպուրականի» հուշարձանի մոտ կայացող ամենամյա դպրոցահանդեսը, նվիրված Վան-Վասպուրականի հերոսամարտի 79-րդ տարեդարձին, սկիզբը՝ ժամը 11-ին: Ազգակ մեկնումը՝ առավոտյան ժամը 10:30-ին: Հանրապետության հրապարակից, միության անդամատոմսերով:

«Վասպուրական» հայրենակցական միություն

ԱՆԳԻԱՌԱՐՀ

Մոսկվայում Բաքվին սխալ կհասկանան

ԺՆԵՎ, 25 ՄԱՅԻՍ, ՄՆԱՐՔ: Մոսկվայից ստացվող հաղորդումները վկայում են, որ Ռուսաստանի միջնորդությամբ հրադադարի հասնելու ԵԱՀԽ Մինսկի միջազգային խորհրդաժողովի նախագահ Յան Էլիասոնի ջանքերը ցանկալի արդյունք չեն տվել ադրբեջանական կողմի երկմտաս ու անհետեւողական գործելակերպի պատճառով: Դատելով Արեւմուտքի առաջին արձագանքներից, այդ մոտեցումը կարող է բացասական արձագանք հարուցել եվրոպական երկրների քաղաքական շրջանակներում:

Պարզ է դարձել, որ Ադրբեջանի պատվիրակության ղեկավար պատգամավորության նախագահ Մամեդովը Մոսկվա էր ուղարկվել միայն ձեւական ներկայության համար, քանի որ նա զինադադարի փաստաթուղթ ստորագրելու լիազորություն չի ունեցել: Բացի դրանից, լիակատար քամահրանք դրսեւորելով լուրջ բանակցությունների հանդեպ, Բաքվի ղեկավարությունը, զինադադարը խստիվ կասեցնելու իր պարտավորությունը հակառակ, մայիսի 17-ի վաղ առավոտյան թույլատրեց գնդակոծել դարաբաղյան ստորաբաժանումների դիրքերը Մարտակերտի շրջանում եւ Աղդամ-Ասկերանի ուղղությամբ: Այս կասկածելի մարտավարությունը վկայում է նաեւ, որ պատասխանական Բաքվի ղեկավարությունը միասնական կարծիք չունի պատերազմի շարունակման նպատակահարմարության առնչությամբ, եւ թերեւս հասկանալի չի գնահատում Անդրկովկասում ու դրա շուրջը փոփոխված իրադրությունները:

Զարմանալի ուշացումով եվրոպացի մենակալները սկսեցին կամ նկատել Կովկասի եւ Բալկանների իրադարձությունների միջեւ, այսպես կոչված Պատմական խորհրդաժողով կազմակերպության անդամ երկրները, իսկ Եվրոպայում Գերմանիան դադարեցին բարգելել իրենց առանձնահատուկ շահագրգռությունը շրջանի իրադարձությունների նկատմամբ, եւ նույնիսկ սկսեցին գործուն կերպով հետաքրքրվել իրենց նիշատակները, որոնք ընդհանուր ինչ բան ունեն եվրոպական պետությունների շահերի հետ:

Այսպես թե այնպես (բայց զգալի չափով հենց Գերմանիայի եւ կանցլեր Գենշերի ճնշմամբ ու պնդմամբ) ներքաշվելով Հարավսլավիայի վերջնական անվայել գործի մեջ, Եվրոպայի կառավարությունները սկսեցին հարաճուն տագնապ զգալ այն բանին զուգընթաց, որ սկսեց պարզ դառնալ Բալկանների կենսատարածքի վերակառուցման մտահղացման համաեվրոպական աղեսի վերածվելու վտանգավորությունը, կամ, համենայն դեպս, վնասակարությունը:

Վերջերս Ժենեւում ԱՄՆ-ի եւ Ռուսաստանի մասնակցությամբ անցկացված եվրոպական հինգ երկրների նախարարների հանդիպումը մի անճարակ փորձ էր սեփական ժողովուրդներին ցուցադրելու, թե նախարարներին միավորում է «Եվրոպայի վառոդի տակառում» Բալկաններում, ստեղծված իրադրության լրջության ըմբռնումը: Իրադարձությունների վտանգավոր շրջադարձից լրջորեն մտահոգված եվրոպացիներն այժմ նկատում են Եվրոպայի անվտանգությանն սպառնացող վտանգը:

Ալիեւը կծում է ընդդիմությանը

ԲԱԿՈՒ, 25 ՄԱՅԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիեւը մի խումբ գաղթականների առջեւ ելույթ ունենալով, ճնշադատեց ընդդիմության ղեկավարներին, նրանց անվանելով «խելագարասներ» եւ «արկածախնդիր հանցագործներ», ինչպես նաեւ «ժողովրդի բշնամիներ, որոնք ծգտում են լոկ գավթել իշխանությունը»: Իր ելույթում Ալիեւը հայտարարեց, որ ինքը արգելում է մայիսի 28-ին՝ Հանրապետության օրը նշանակված «Սուսվաթ» կուսակցության հանրահավաքի անցկացումը, եւ արգելքը խախտողները կոպտաժվեն:

ԱՇԽԱՐՀ

Կրավչուկը խնամատեսել է Ելցինի բռնած դիրքը

ՆՅՈՒ ՅՈՐՔ, 25 ՄԱՅԻՍ, ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ԱՐՄԵՆՊՐԵՍ: «Նյու Յորք թայմզը» հղված է տպագրել, որի մեջ մասնավորապես ասվում է. «Այն ժամանակ, երբ Մոսկվայում եւ Կիեւում շարունակվում են բանակցությունները Ղրիմի առնչությամբ եւ Սեւծովյան նավատորմի նկատմամբ վերահսկողության հարցի շուրջը, Ուկրաինայի նախագահ Կրավչուկը հանդես է եկել նախագահ Բորիս Ելցինի ինքնաղատությամբ, նրան մեղադրելով «մեկ այլ իմպերիալիստական պետության նկատմամբ սպառնալիքներ տեղալու» մեջ: Կրավչուկն առանց այդ էլ իր երկրում գտնվում է խաղաքաղաքական զգալի ճնշման ներքո, առավել եւս, որ հաջորդ ամիս նշանակված է նախագահական ընտրությունների անցկացումը: Նա խոստացել է, որ Ղրիմը կմնա ուկրաինական եւ դրա համար Կիեւին հարկ չի լինի ուժ գործադրել: Դիմելով պատերազմի մի խումբ վետերանների, Կրավչուկը ինքնաղատել է Ռուսաստանի ղեկավարությունը եւ ռուսներին մեղադրել երկու նախկին հարեւան խորհրդային հանրապետությունների միջեւ լարվածությունն ուժեղացնելու մեջ:

«Նախագահը կարող է նախագ-



գուշացումներով հանդես գալ միայն իր սեփական կառավարական մարմինների ու նախարարների, այլ ոչ թե որիշ երկրների նախագահների նկատմամբ», հայտարարել է Կրավչուկը, ընդսմին չնշելով Ռուսաստանի նախագահի անունը»:

Դատապարտվել են 240 տարով

ՆՅՈՒ ՅՈՐՔ, 25 ՄԱՅԻՍ, ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ԱՐՄԵՆՊՐԵՍ: Երեքշաբթի այստեղ ցմահ բանտարկության դատապարտվեցին 4 մուսուլման-արմատականներ, որոնց երդվյալ ատենակալների ժյուրին մարտի 4-ին մեղավոր է ճանաչել Նյու Յորքի համաքաղաքային առեւտրի կենտրոնում պայթյուն կազմակերպելու համար:

Նրանք բոլորն էլ՝ ամերիկյան քաղաքացիություն ունեցող պաղեստինցի վարանդի Մուհամեդ Սալամեհը, Պաղեստինից սերած Նիդալ Այյադը, Եգիպտոսից ժամանած Մահմուդ Աբուհալիման եւ ԱՄՆ-ում քաղաքական ապաստան խնդրած պաղեստինցի Ահմադ Աջաջը դատապարտվել են յուրաքանչյուր 240 տարվա բանտարկության, առանց ներման իրավունքի: Ինչպես պարզաբանեց ֆեդերալ օկրուգային դատավոր Քեւին Դաֆին, կալանքի ժամկետը սահմանելիս ինքը ուշադրության է առել պայթյունի հետեւանքով զոհվածների «կյանքի հանուր տեսությունը», բացի այդ ահաբեկիչներից յուրաքանչյուրը տուգանվել է 250 հազար դոլլարով չափով:

Մինչ այդ, շարունակվում է Մերձավոր Արեւելքից եւս 15 սերողների դատավարությունը, որոնք մեղադրվում են ԱՄՆ-ի խոշորագույն քաղաքում մի ամբողջ շարք ահաբեկչական գործողություններ նախապատրաստելու մեջ: Ահաբեկիչների դատավարությունը նշանակված է սեպտեմբերին: Հիշեցնենք, որ 1994 թ. փետրվարին Նյու Յորքի հիշյալ կենտրոնում պատահածը խլել էր 6 սպանված եւ 1000-ից ավել վիրավոր:

ՍԱԿԱՐԱՆ

Դրամի կուրսը Երեւանում

Մայիսի 25-ի դրությամբ Երեւանի փոխանակման կետերում ամերիկյան դոլլարի եւ ռուսական ռուբլու նկատմամբ դրամի փոխարկային արժեքը հետեւյալն է.

	ԱՄՆ 1 դոլլար		ռուս. 1000 ռ.	
	առք	վաճառք (դրամներով)	առք	վաճառք (դրամներով)
«Արաքսիր» բանկ	390	410	173	185
Արդշինբանկ	410	420	215	225
«Արմենիա» բանկ	400	425	210	224
Հայագրոբանկ	410	430	215	230
Հայէկոնոբանկ	400	425	215	230
Հայներարտբանկ	400	415	212	220
«Մասիս» բանկ	415	430	210	224
Վերականգնման եւ զարգացման բանկ	415	420	210	225

Եղանակը Հայաստանում



ԱՇԽԱՐՀ

ԱՄՆ ռազմանավերը Հաիթիի ափերին

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 25 ՄԱՅԻՍ, WSJ: Նավթ տեղափոխող մի նավ այսօր անցեց ամերիկյան ռազմանավի հրետանախազգուշական կրակոցը եւ առպաստան գտավ Հաիթիի նավահանգստում: Ամերիկյան 10 ռազմանավեր ներկայումս պարեկում են Պորտ-օ-Պրենսի ափամերձ ջրերում, փորձելով կիրառել ԱՄՆ կոնգրեսի կողմից Հաիթիին շրջափակման ենթարկելու որոշումը: Վաշինգտոնը հաիթյան իշխանությունից պահանջում է վերահաստատել ընտրված նախագահ Արիստիդին իր պաշտոնում: Վերջինս ապաստան է գտել ԱՄՆ-ում:

Հազվադեպ միահամուռություն

ՊԵԿԻՆ, 25 ՄԱՅԻՍ, ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ԱՐՄԵՆՊՐԵՍ: Տայվանի Գուլյան փոքր քաղաքի բնակիչները հազվադեպ միահամուռություն դրսեւորեցին, քվեարկելով (98 տոկոս) կղզում թվով չորրորդ ատոմակայանը իրենց շրջանում կառուցելու դեմ:

Աստեղները վնասակար են

ԱԲՈՒ ԴԱԲԻ, 24 ՄԱՅԻՍ, ՈՒՍ-ՄՆԱՐՔ: Իրանի մանուլում հրապարակվել է փաստաթուղթ, որը պաշտոնապես արգելում է արբանյակային հեռուստատեսության ընդունիչ անտենաների օգտագործումը, քանի որ դրանք կարող են օգտագործվել իսլամին հակառող եւ անհարիր ծրագրերի ընդունման համար:

«ՏՐԱՆՍ-ԼԱՄԲՐՈՆ» ՍՊԸ

Կազմակերպում է բեռների տեղափոխում

ԵՐԵՎԱՆ-ՄԵՂՐԻ-ՁՈՒԼՖԱ-ԵՐԵՎԱՆ

Ինչպես նաեւ պատրաստում է արտանետա-տրանսպորտային փաստաթղթեր:

Ցանկացողները զանգահարեն հետեւյալ համարներով 53-34-47, 53-75-06

A STYLE 58.18.41

Ե Վ Ա

ուսումնական կենտրոնը հրավիրում է սովորելու 1.5-2-ամսյա դասընթացներում հետեւյալ մասնագիտություններով.

- օդերեւութաբանական գործ. ծրագրավորման փաթեթների եւ լեզուների ուսուցում IBM PC համակարգիչների վրա.
- հաշվողական հաշվառում եւ համակարգիչների կիրառումը հաշվապահության մեջ.
- անգլերեն լեզու. (3 ցիկլով)
- կոսմետիկա եւ էռիլյացիա.
- մերսում
- կար ու ձեւ. ասեղնագործություն:

Մենք երաշխավորում ենք ոչ միայն ուսուցման բարձր մակարդակ, այլեւ հարմարավետ դասասենյակներ քաղաքի կենտրոնում: Ընդունելությունը ամեն օր, բացի շաբաթ եւ կիրակի օրերից, ժամը 11:00-16:00-ը: Հասցեն՝ Սայյան 4 (Թումանյանի եւ Սայյանի տուն-թանգարանի շրջակայքում): Հեռ.՝ 58-21-22:

«Պարբերական» հրատարակչության տպարան, Երեւան-23 Արշակունյաց 2 Գրանցման թիվ 65. Դասիչ 69149. Տպաքանակ 15 000. Պատվեր 1763 Ստորագրված է տպագրության՝ 25.05.1994 Գինը՝ 5 դրամ

digitised by A.R.A.R.@